Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի
2024 թվականի հրամանով

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բովանդակություն

Ներածություն 3

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 4

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 7

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 35

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 48

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 58

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ 65

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՁԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 72

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 76

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 83

10. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 94

Ներածություն

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման, տիեզերական գործունեության բնագավառներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման, տիեզերական գործունեության բնագավառներում:

Իր առջև դրված խնդիրները կարգավորելու նպատակով Տեսչական մարմինը 2023 թվականի ընթացքում հետևողականորեն իրականացրել է «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» 11.06.2018թ. թիվ 730-Լ ՀՀ վարչապետի որոշմամբ իրեն վերապահված և 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված գործառույթները:

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի կողմից կատարվել են 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված հետևյալ միջոցառումները՝

✓ բարձրագույն ուսումնական հաստատություններում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում.

✓ զանգվածային ներկայության վայրերում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում.

✓ ամառային դպրոցական արձակուրդների ժամանակաշրջանում իրազեկման աշխատանքների իրականացում ՀՀ տարածքում գործող մանկական հանգստյան ճամբարներում.

✓ նպատակային հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում մայրաքաղաքի զվարճանքի բացօթյա վայրերում՝ ատրակցիոնների և այլ սարքավորումների համապատասխանությունը գործող նորմերին վերահսկելու նպատակով.

✓ հրդեհային անվտանգության բնագավառում ստուգված տնտեսավարող սուբյեկտների հրդեհային և տեխնիկական անվտանգության վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում.

✓ էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների (մասնաճյուղերում) և իրենց պատկանող էներգատեղակայանքների վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում.

✓ մասնակցություն շինարարների վարկանիշի հաշվարկի մեթոդաբանության մշակման աշխատանքներին.

✓ համապատասխան մարմնի կողմից ջրային տրանսպորտի գործունեության իրավական կարգավորման նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

✓ տարածքային ստորաբաժանումների կողմից 2019-2022 թվականների ընթացքում կատարած աշխատանքի ուսումնասիրություն.

✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացնելը

✓ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի □Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին□ թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ.

✓ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ.

✓ Երևանում և ՀՀ մարզերում նախատեսված 13 իրազեկում-հանդիպումների փոխարեն 13-ի կազմակերպում՝ մարզպետարանների, համայանքների ներկայացուցիչների, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, տնտեսավարող սուբյեկտների հետ.

✓ Տեսչական մարմնի ղեկավարի և ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ 1 մամուլի ասուլիսի կազմակերպում և անցկացում.

✓ ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում.

✓ ՀԿ-ների, պետական կառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում իրազեկող բնույթի սոցիալական հոլովակների, կանխարգելիչ միջոցառումների իրականացում:

Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումները կատարվել են ոչ ամբողջ ծավալով.

✓ ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկող 60 հրապարակումների փոխարեն փաստացի պատրաստվել և հրապարակվել է 49-ը.

✓ 40 իրազեկող հրապարակումների, մամուլի հաղորդագրությունների և տեսանյութերի փոխարեն փաստացի պատրաստվել և հրապարակվել է 9-ը:

Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումները չեն իրականացվել.

✓ «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը

✓ □Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին□ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը

✓ ՀՀ ԲՈՒՀ-երի, դատարանների, այլ կառույցների հետ համագործակցության շրջանակում վերապատրաստումների կազմակերպում.

✓ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների դասընթացների կազմակերպում:

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է ընդհանուր առմամբ 932 ստուգում, որից 559-ը՝ 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, 52-ը՝ ոչ պլանային ստուգումներ և 321-ը՝ վերստուգումներ: Ըստ բնագավառների ստուգումների բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը.



Ստուգումների արդյունքում արձանագրվել է [illegible] խախտում, ընդ որում 2124-ը՝ էներգետիկայի և էներգասպառման, 1895-ը՝ հրդեհային և տեխնիկական անվտանգության, 742-ը՝ քաղաքաշինության, 266-ը՝ հողօգտագործման և 66-ը՝ տրանսպորտի բնագավառներում:



ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրով հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված էր

կատարել ստուգումներ 252 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 294 արտադրական նշանակության օբյեկտներում, բենզալցակայաններում, գազալցավորման կայաններում, առևտրի և հասարակական սննդի, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող օբյեկտներում, գիտական և ուսումնական, հյուրանոցներում, մինչև 800 նստատեղով մշակութային հիմնարկներում, ընդհանուր, գյուղատնտեսական նշանակության և նավթամթերքի պահեստներում, հիվանդանոցներում, տրանսպորտային և կառավարման հիմնարկներում: Նախատեսված ստուգումներից ավարտվել են 192 սուբյեկտին պատկանող 210 օբյեկտների ստուգումներ (նախատեսված քանակի 71,4%): Միաժամանակ ավարտվել է 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 2 օբյեկտի ստուգում: Ոչ պլանային 8 ստուգում իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա: Ստուգումների գործունեության տարեկան ծրագրով նախատեսված 68 օբյեկտ չի ստուգվել փաստացի չգործելու (այդ թվում՝ ժամանակավոր դադարեցման), առցանց գործելու, հաշվառումից հանված կամ սնանկ լինելու պատճառով: 16 հանձնարարագրի կատարում ընթացքի մեջ է: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 218 վերստուգում:

2022 թվականի ընթացքում Սանշական ապրանքի ստուգումների տարեկան ծրագրով հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված 590 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 738 ստուգումներից ավարտվել էին 442 սուբյեկտին պատկանող 558 օբյեկտների ստուգումները (նախատեսված քանակի 75,61%), ևս 64 սուբյեկտին պատկանող 83 օբյեկտ ստուգվել էր ըստ անհրաժեշտության: Ոչ պլանային ստուգումներից 58 ստուգում իրականացվել էր ՀՀ վարչապետի հանձնարարականի, 5 ստուգում հանրությունից ստացված դիմում-բողոքների և 20 ստուգում պետական մարմինների կողմից ստացված գրությունների հիման վրա: 2022

թվականի ընթացքում ընդհանուր առմամբ իրականացվել էր ընդհանուր առմամբ 641 ստուգում և 130 վերստուգում:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում 2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 452 ստուգումներից ավարտվել էր 337-ը (նախատեսված ընդհանուր քանակի 74,6%), ևս 8 ստուգում իրականացվել էր հանրությունից ստացված դիմում-բողոքի և 51 ստուգում՝ պետական մարմնի կողմից ստացված գրությունների հիման վրա: Իրականացվել էր ընդհանուր առմամբ 396 ստուգում և 249 վերստուգում:

2023, 2022 և 2021 թվականների ընթացքում կատարված ստուգումների և վերստուգումների համեմատությունն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



2023 թվականի ընթացքում կատարած ստուգումներ/վերստուգումներն ըստ տարածքային միավորների բաշխված են հետևյալ կերպ.



2023 թվականի ստուգումների արդյունքում արձանագրվել է 1895 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Ստուգումներն իրականացվել են գործունեության հետևյալ ոլորտներում՝



<u>Ընդհանուր նշանակության 48 պահեստներում և բազաներում</u> բացահայտվել է 528 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 27,9%-ը: Մեկ օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Ստուգումներից 3-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա: Հիմնական խախտումներն են.

✓ *էլեկտրամատակարարումն անջատող սարքերը (անջատիչները) չեն գտնվում պահեստից դուրս – 40 դեպք,*

✓ *պահեստային շինությունում օգտագործվում է խրոցակային վարդակներ – 36 դեպք,*

✓ *կախված մակերեսի չափերից պահեստները սարքավորված չեն հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգով – 34 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 34 դեպք,*

✓ *կախված մակերեսի չափերից պահեստները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 31 դեպք:*

Նշված ժամանակահատվածում ստուգվել է **<u>200 մ² և ավելի մակերեսով առևտրի և հասարակական սննդի 46 օբյեկտ</u>**: Ստուգումների արդյունքում բացահայտվել է 257 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 13,6%-ը: Երեք օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 36 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 26 դեպք,*

✓ *առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 26 դեպք,*

✓ *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 21 դեպք,*

✓ *«Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա - 20 դեպք:*

<u>Մինչև 200 մ² մակերեսով առևտրի և հասարակական սննդի 14 օբյեկտում</u> ստուգումների արդյունքում բացահայտվել է 33 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,7%-ը: Հինգ օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Ստուգումներից 2-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա: Հիմնական խախտումներն են.

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 5 դեպք,*

✓ *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 5 դեպք,*

✓ *առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 4 դեպք,*

✓ *հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում* – 4 դեպք,

✓ *օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով - 4 դեպք:*

<u>200 մ² և ավելի մակերեսով արտադրական կազմակերպությունների 87 օբյեկտներում</u> բացահայտվել է 552 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 29,1%-ը: Ստուգումներից 3-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա: Առանց թերությունների շահագործվող օբյեկտները 9-ն են: Հիմնական խախտումներն են.

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 70 դեպք,*

✓ *կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 66 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 62 դեպք,*

✓ *500 մ³-ից ավելի ծավալով արտադրական շենքերն ու շինություններն սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 56 դեպք,*

✓ *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով – 52 դեպք:*

<u>Մինչև 200 մ² մակերեսով արտադրական կազմակերպությունների 41 օբյեկտներում</u> բացահայտվել է 117 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 6,2%-ը: Տասնչորս օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 20 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 20 դեպք,*

✓ *կախված մակերեսի չափերից արտադրական կազմակերպությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 19 դեպք,*

✓ *շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ – 10 դեպք,*

✓ *բացառությամբ հատուկ նշանակության սենքերի մնացած լուսամուտները ազատ չեն – 7 դեպք,*

✓ *օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով – 7 դեպք:*

<u>9 բենզալցակայանի</u> ստուգումների արդյունքում բացահայտվել է 37 խախտում, ինչը կազմում է արձանագրված խախտումների 2,0%-ը: Միաժամանակ պարզվել է, որ 1 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *բենզալցակայանը սարքավորված չէ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 6 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 6 դեպք,*

✓ *հեղուկ վառելիքի ստորգետնյա տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն – 5 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 5 դեպք:*

<u>Կառավարման 24 հիմնարկում</u> բացահայտվել է 140 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր խախտումների 7,4%-ը: Ստուգումներից 3-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա: 2 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 20 դեպք,*

✓ *կախված մակերեսի չափերից կառավարման հիմնարկները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 19 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 17 դեպք:*

Նշված ժամանակահատվածում ստուգվել է **14 գազալցավորման կայան:** Ստուգումների արդյունքում բացահայտվել է 111 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 5,9%-ը: Մեկ օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *ԱԳԼՃԿ-ի տարածքում իրեն պատկանող շինությունների միջև նորմերով պահանջվող նվազագույն միջտարածությունները պահպանված չեն – 10 դեպք,*

✓ *պայթյունավտանգ գոտիներով սենքերում (գազի վտանգավոր խտության պարագայում) էլեկտրամատակարարման սխեման իրականացված չէ այնպես, որ տեխնոլոգիական սարքավորումները ավտոմատ անջատվեն – 8 դեպք,*

✓ *բոլոր շինությունների էլեկտրական սարքավորումները համալրված չեն հողանցման համակարգով – 7 դեպք,*

✓ *պայթյունավտանգ կարգի շինություններում տեղադրված չեն գազի վտանգավոր կոնցենտրացիայի ազդանշանման սարքեր – 7 դեպք:*

Գիտական և ուսումնական 3 հաստատություններում բացահայտվել է 21 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,1%-ը: Մեկ օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

6 հյուրանոցների և հանրակացարանների ստուգումների արդյունքում բացահայտվել է 27 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 1,4%-ը: 3 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող երկու կազմակերպությունում բացահայտվել է 10 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,5%-ը:

Գյուղատնտեսական նշանակության մեկ պահեստում բացահայտվել է 6 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,3%-ը:

2 հիվանդանոցում, պոլիկլինիկայում և ամբուլատորիայում բացահայտվել է 24 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր խախտումների 1,3%-ը:

Մինչև 800 նստատեղով մշակութային 2 հիմնարկում բացահայտվել է 10 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,5%-ը:

<u>Նավթամթերքների 3 պահեստում</u> բացահայտվել է 18 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,9%-ը:

<u>Տրանսպորտային 2 հիմնարկում</u> բացահայտվել է 4 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,2%-ը: Մեկ օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

2023 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 164 կարգադրագիր:



Իրականացված 218 վերստուգումների արդյունքում արձանագրվել է խախտումների քանակի նվազում 63,64%-ով: Վերստուգումներով հաստատվել է, որ 101 օբյեկտ (46,3%) վերացրել է ստուգումներով բացահայտված թերությունները:



Վերստուգումներն ըստ գործունեության ոլորտների ունեն հետևյալ գրաֆիկական պատկերը.



Ստուգումների և վերստուգումների արդյունքում պարզվել է, որ առանց թերությունների շահագործվում է 133 սուբյեկտի 137 օբյեկտ, դրանք են՝ «ԼԵՄԷՍ» ՍՊԸ, «ՎԱՀԵ ԲԱԴԱԼՅԱՆ ՎԱՐՇԱՄԻ» Ա/Ձ, «ՀՐԱՅՐ ՕՀԱՆՅԱՆ ՀՐԱՆՏԻ» Ա/Ձ, «ԳՅՈՒՐՍ» ՍՊԸ, «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ, «ՈՍԿԵՎԱԶԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, «ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՓԲԸ, «ՎԱՆԱՁՈՐԻ ԲԱՂՆԻՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ, «ՏԱՓ» ՍՊԸ, «ԱՆԴՐԱՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՍԵՆԻ» Ա/Ձ, «ԳՅՈՒԼՆԱՐԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՀԱՅԿԻ» Ա/Ձ, «ԿԱՍՊ» ՍՊԸ, «ՄԵՏՐՄԱՐԿ» ՍՊԸ, «ՌԱ-ՎԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՍՈՖԹ ՍԻԹԻ» ՍՊԸ, «ՁԻ ԷՍ ՁԻ» ՍՊԸ, «ԱՍՏՂԱՍԱՐ» ՍՊԸ, «ՄԱՆԵ ՎՈՒԴ» ՍՊԸ, «ՆԱՐՎԱԿԻ» ՍՊԸ, «Հ.ՍՄԲԱՏ» ՍՊԸ, «ԼՅՈՒՍԹԱՅԼ» ՍՊԸ, «ՌԱԹԹԱՆ ԳԱՐԴԵՆ» ՍՊԸ, «ՀՐԱՇՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՖԱՅՆ

ՖՈՒՐՆԻՏՈՒՐ» ՍՊԸ, «ՀԵՆՈԲԵՌ» ՍՊԸ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ, «ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ՋԱՆԻԲԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» Ա/Ձ, «ԱՐԱՄԱՅԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՇԱԿԻ» Ա/Ձ, «ԳԵՂԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՊԱՏՎԱԿԱՆԻ» Ա/Ձ, «ՄԱՄԻԿՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ» Ա/Ձ, «ԳՈՒՐԳԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ ՍՏՅՈՊԱՅԻ» Ա/Ձ, «ԱԼԲԵՐՏ ԼՈՐԻԿՅԱՆ ԽԱՉԻԿԻ» Ա/Ձ, «ՀՐԱՉՅԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ» Ա/Ձ, «ՄԱՍԻՍ-94» ՍՊԸ, «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ» ՍՊԸ, «ՄԵՏԱՂԱՄԱՆԵՂԵՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ, «Գ.Մ.Գ. ԲՐԱԴԵՐՍ» ՍՊԸ, «ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ԷԼԻՏ» ՍՊԸ, «ԱՇՈՏ ԱՇՈՏՅԱՆ» Ա/Ձ, «ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ, «ՌԱՎ-ՌԱԶ» ՍՊԸ, «ՍԵՅՐԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ ՍՈՒՐԵՆԻ» Ա/Ձ, «ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱԼՖՐԵԴԻ» Ա/Ձ, «ՊՏՂՆԻ ԳՈԼԴ» ՍՊԸ, «ԿԱՌՏՈՆ ՊՐԻՆՏԻՆԳ» ՍՊԸ, «ՌՈՍ ԳԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ, «ՄԱԴԼՀԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԷՋՄԻԱԾԻՆ ԿԱԹ» ՍՊԸ, «ՍԱՄԿՈՆ» ՍՊԸ (Արմավիրի մարզ, գ. Հացիկ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան Հատիսի փողոց թիվ 20), «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀՄԴ, «ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ԳՆԹՈՒՆԻՔ» ՍՊԸ, «ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» Լ(Տ)Ը, «ԲԱԴԱԼՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ, «ՍՈՒՐԵՆ ՍԱՄՍՈՆՅԱՆ» Ա/Ձ, «ՎԻԳԵՆ-ՎԻԼԵՆ» ՍՊԸ, «ԱՐԱԳԱՑՈՒՄ» ՍՊԸ, «ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ N1» ՍՊԸ, «ԱՅԱՍ» Ա/Կ, «ԱՐՎԵՏ» ՍՊԸ, «ՎԻՑԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԵՐԵՎԱՆ ՄԱՐՄԸԼԵՅԴ ԻՆԴԸՍԹՐԻՍ» ՍՊԸ, «ՏԻԵՌԱՍ ԴԵ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ, «ՀԵԼԼՈՏԵՔՍ» ՍՊԸ, «ԴԱՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՎՎՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԱՐԳԱ-ՅՈՒՐՈՍԹԻԼ» ՍՊԸ, «ԾԻՐԱՆ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ (Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Տ. Մեծի 33/2, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Պիոներական փողոց թիվ 1/19), «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ (Կոտայքի մարզ, ք. Հրազդան Վանատուր թաղ. Ձ Անդրանիկի պող. թիվ 66), «ԱԳՐՈԹԵՔԻՆՎԵՍՏ» ՍՊԸ, «ԱՐԾՐՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՐԱՆՏԻ» Ա/Ձ, «ԱՐՄԱՆ ԱՆԻ» ՍՊԸ, «ՎԱՂԱՐԾ» ՍՊԸ, «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԳԱԼՍՏՅԱՆՆԵՐ» ՍՊԸ, «ԲԱՂՐԱՄՅԱՆ» ՍՊԸ, «ԿԱՐԱՊԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ ՄՀԵՐԻ» Ա/Ձ, «ՍԻԹԻ ՍԵՆԹՐԱԼ» ՍՊԸ, «ԵՎՐՈՄԱՔՍ» ՍՊԸ, «ԴՈՒՍՏՐ ԱՆԳԵԼԻՆԱ» ՍՊԸ, «ԱՍԼԱՆՅԱՆՆԵՐ» ՍՊԸ, «ՄԵԼՆԱՐ» ՍՊԸ, «ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ, «ԱՐԱԳԱԾ ՖՈՒԴ» ՍՊԸ, «ԷՍԷՌ ՖՈՒԴ» ՍՊԸ, «ԿԱՄՕՅԼ» ՍՊԸ (Կոտայքի մարզ,Պտղնի, Սևանի մայրուղի 12, 2 ձախ , Կոտայքի մարզ, Արզնի 4-րդ 89), «ՎԱՂԱՐԾ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ (Ծաղկաձոր ք. Սարալանջի 2-րդ փողոց 2 հանգստյան տուն), «Գ.Գ.Գ.Մ. ԲՐԵՆԴ» ՍՊԸ, «ՍԱՐԱՆԴ» ՍՊԸ, «ԲԵՍԹԳԱԶ» ՍՊԸ, «ՀԻՆ ԿԱՐՊԵՏ» ՍՊԸ, «ԻՌ-ՎԻՆԳ» ՍՊԸ, «ՖԼԵԾ» ՍՊԸ (Արագածատոնի մարզ, Ապարան համայնք, Մ. Բաղրամյան 62/1),

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ» ՍՊԸ, «ՀԱՐՈՅԱՆ ՍԱՆԱՄ ՏՈՆԱԿԱՆԻ» Ա/Ձ, «ՌԱՁՄԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» ԱՁ, «ՌՈԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ ՍՈՒՐԵՆԻ» Ա/Ձ, «ԳԱԳԻԿ ԱԲՈՎՅԱՆ ՀՈՎՍԵՓԻ» Ա/Ձ, «ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԱՇՔ» Ա/Կ, «ԱՐԳԻՇՏԻ ԴԱՎԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿԻ» Ա/Ձ, «ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» Ա/Ձ, «ԱՎԱԶՊԼՅՈՒՍ» ՍՊԸ, «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՈՒՆ» ՓԲԸ, «ԾԱՂԿԱՀՈՎԻՏ» ՍՊԸ, «ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՑ» ՍՊԸ, «ՍԻԹԻ» ՍՊԸ (Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Վանատուր թաղամաս, Ձ Անդրանիկի պողոտա 66), «ՎԱՐՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ, «ՎԵՐԱԴԱՐՁ 1» ՍՊԸ, «ԴՈԼ-ՄԱ-ՄԱ» ՍՊԸ, «ԷԴՈՒԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ» Ա/Ձ, «ՁԱՔԱՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍԵԴՐԱԿԻ» Ա/Ձ, «ԱՐՄԵՆ-ԱԼԿՈ» ՍՊԸ, «ԱՐՄԱՎԻՐ ՖՐՈՒԹ» ՍՊԸ, «ԳՐԻԳ-ԲԻԶՆԵՍ» ՍՊԸ, «ԿԱՄԱՐԻՍ» ՍՊԸ, «ԱՐ-ՆԱՐ» ՍՊԸ, «ՌՈՒԲԻԿ ՍԱՔԱՆՅԱՆ ԷԴԻԿԻ» Ա/Ձ, «ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» Ա/Ձ, «ԴԻԴՎԱՆ» ՍՊԸ, «ՖԱՆՏԻ ՊԼԱՍՏ» ՍՊԸ, «ԳՈՀԱՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ» Ա/Ձ, «ԱՌԱՄՆԱ» ՍՊԸ, «ԷՄ ԷՆ ԲԻ» ՍՊԸ, «ԱԼԲԵՐՏ ՍՆՁՈՅԱՆ ՄՇԻՐԻ» Ա/Ձ, «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ (Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Բաղրամյան 59ա, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Վ. Առաջին փ., 10դ/2), «ՔԱՆԴԱԿ ՏՐԻՈ» ՍՊԸ, «ԴԻԼԻՋԱՆ ԱՌՈՂՋԱՐԱՆ» ՓԲԸ, «ՄԱՐԿՈ» ՍՊԸ, «ԼԵՎԻԿ ՇԱՀԲԱԶՅԱՆ ԲԵՆԻԿԻ» Ա/Ձ, «ԲԵՆՍԱՐ» ՍՊԸ, «ՍԱԹԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿԻ» Ա/Ձ:

2023 թվականի կատարված ստուգումների 47,8%-ը կազմում են տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները, 2,3%-ը՝ ոչ պլանային ստուգումները և 49,9%-ը՝ վերստուգումները: 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3,26 օր (2022 թվականին՝ 3,97 օր, 2021 թվականին՝ 3,48 օր, 2020 թվականին՝ 2,9 օր): Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,18-ը (2022 թվականին՝ 2,07, 2021 թվականին՝ 2,11-ը, 2020 թվականին՝ 2,4-ը): Ոչ պլանային ստուգումների 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 2,25 օր (2022 թվականին՝ 3,17 օր, 2021 թվականին՝ 3,15 օր, 2020 թվականին՝ 2,1 օր): Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2.00-ը (2022 թվականին՝ 1,89-ը, 2021 թվականին՝ 1,80-ը, 2020 թվականին՝ 2,1-ը): 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,34 օր (2022 թվականին՝ 1,47 օր, 2021 թվականին՝ 1,65 օր, 2020 թվականին՝ 1,6 օր): Յուրաքանչյուր

վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,33-ը (2022 թվականին՝ 2,09, 2021 թվականին՝ 2,0-ը, 2020 թվականին՝ 2,0-ը):

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով էներգետիկայի և էներգասպառման բնագավառում նախատեսված էր կատարել ստուգումներ 135 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 137 օբյեկտներում: Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են 92 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող օբյեկտների ստուգումները, ինչը կազմում է նախատեսած քանակի 66,4 տոկոսը: Միաժամանակ ավարտվել է 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 1 օբյեկտի ստուգում: 28 օբյեկտ (20,4%) չի ստուգվել չգործելու, գազամատակարարման դադարեցման, վարձակալության և այլ պատճառներով: 17 հանձնարարագրի կատարում ընթացքի մեջ է: Միաժամանակ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 84 վերստուգում: 5 վերստուգում չի իրականացվել՝ տնտեսավարողի սնանկության, ինչպես նաև փաստացի չգործելու պատճառով:

2022թ. ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 147 օբյեկտների ստուգումներից տարվա ընթացքում ավարտվել էր 115-ը (78,8%), միաժամանակ իրականացվել էր 45 վերստուգում: 2021թ. ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 128 ստուգումներից ավարտվել էին 102 տնտեսավարող սուբյեկտի 110 օբյեկտների ստուգումները (ընդհանուր քանակի 85,9%), միաժամանակ իրականացվել էր 52 վերստուգում:



2023 թվականին իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է 2124 խախտում (2022թ.՝ 2434 խախտում, 2021թ.՝ 1579 խախտում):



Ստուգումների արդյունքում կազմվել և տնտեսավարող սուբյեկտներին է տրամադրվել պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 92 կարգադրագիր (2022թ.՝ 111 կարգադրագիր, 2021թ.՝ 134 կարգադրագիր):

Առանց թերությունների է գործում 1 սուբյեկտ՝ Տավուշի մարզում «ՏԱՎՈՒՇԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ» ՓԲԸ (2022թ.՝ 4 սուբյեկտ, 2021թ.՝ 2 սուբյեկտ): 2021-2023թթ. ընթացքում տրված կարգադրագրերն ունեն հետևյալ գրաֆիկական պատկերը.



Ստուգումների ընթացքում **<u>տնտեսավարող սուբյեկտների</u>** 37 օբյեկտներում (կամ դրանց մասնաճյուղերում) բացահայտվել է 151 խախտում, ինչը կազմում է խախտումների ընդհանուր թվի 7,1%-ը (2022թ.՝ 123 օբյեկտ և 504 խախտում, այն ընդհանուր 2434 խախտումների 20,7%-ն է, 2021թ.՝ 2021թ.՝ 102 օբյեկտ և 562 խախտում, որը ընդհանուր 1579 խախտումների 35,6%-ն է): Հիմնական խախտումները վերաբերում են.

✓ *գազի տնտեսության շահագործման, սպասարկման և վերանորոգման հատուկ հրահանգների առկայությանը - 13 դեպք (2022թ.՝ 77 դեպք, 2021թ.՝ 59 դեպք),*

✓ *կազմակերպության գազի տնտեսությունները շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմի (ԻՏԱ), գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող ԻՏԱ, գազամատակարարման օբյեկտների շինարարությունն իրականացնող շինմոնտաժային կազմակերպությունների ԻՏԱ գիտելիքների ստուգման կազմակերպմանը – 12 դեպք (2022թ.՝ 53 դեպք, 2021թ.՝ 58 դեպք),*

✓ *գազատարի ամրության և կիպության փորձարկում չի իրականացնում, փորձարկման արդյունքները չեն գրանցվում շինարարական տեղեկաթերթիկում և չեն հաստատվում համապատասխան ստորագրություններով – 13 դեպք:*

Վերստուգվել է (ըստ գործունեության բնագավառի) 80 օբյեկտ, որի արդյունքում տնտեսավարող սուբյեկտներում խախտումների քանակը նվազել է 14.3%-ով (2022թ.՝ 38 օբյեկտ, արդյունքում նվազել է 36,9%-ով, 2021թ.՝ 50 օբյեկտ, արդյունքում նվազել է 64,7%-ով, 2020թ.՝ 5 օբյեկտ, արդյունքում նվազել է 76,2%-ով):

Ստուգումների ընթացքում **<u>գազի համակարգի տնտեսավարող սուբյեկտների</u>** 49 օբյեկտներում (կամ դրանց մասնաճյուղերում) բացահայտվել է 858 խախտում, ինչը կազմում է խախտումների ընդհանուր թվի 40,4%-ը: Հիմնական խախտումները վերաբերում են.

✓ *առկա չեն գազի տնտեսության շահագործման, գազի սարքավորումների տեխնիկական սպասարկման և վերանորոգման հատուկ հրահանգները՝ հաստատված կազմակերպության գլխավոր ինժեների կողմից - 39 դեպք,*

✓ *վերգետնյա և ստորգետնյա գազատարները շահագործման ընթացքում չեն ենթարկվում պարբերական պրոֆիլակտիկ ստուգման – 41 դեպք,*

✓ *վերգետնյա և ստորգետնյա գազատարները պարբերական պրոֆիլակտիկ ստուգումները չեն անցկացվում նախօրոք կազմված և գազի տնտեսության կազմակերպության տեխնիկական ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն – 37 դեպք:*

Ստուգումների ընթացքում **<u>էլեկտրաէներգետիկայի բնագավառում և էլեկտրասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող</u>** սուբյեկտների 28 օբյեկտներում (կամ դրանց մասնաճյուղերում) բացահայտվել է 410 խախտում, ինչը կազմում է խախտումների ընդհանուր թվի 19,3%-ը: Հիմնական խախտումները վերաբերում են.

✓ *յուրաքանչյուր աշխատատեղի պաշտոնական հրահանգներում նշված չեն այն սարքավորումների սպասարկման հրահանգների, սարքավորումների և սարքվածքների սխեմաների ցանկը, որոնց իմացությունը պարտադիր է տվյալ պաշտոնի համար - 19 դեպք,*

✓ *յուրաքանչյուր աշխատատեղի պաշտոնական հրահանգներում նշված չեն աշխատողի իրավունքները, պարտականությունները – 19 դեպք,*

✓ *կազմակերպությունը չունի էլեկտրատեղակայանքների օպերատիվ, տեխնիկական սպասարկման, նորոգման և փորձարկման աշխատանքների համար տեխնիկական կանոնակարգի պահանջները բավարարող մասնագիտացված էլեկտրատեխնիկական անձնակազմ կամ այդ աշխատանքների կատարումը պայմանագրային հիմունքներով չի պատվիրել սպասարկող անձին – 19 դեպք,*

✓ *ԲՍ-ի էլեկտրասարքավորման փորձարկումները չեն կազմակերպվում ըստ համապատասխան նորմերի – 20 դեպք:*

<u>Գազաբաշխման և գազասպառման միջին և բարձր ճնշման</u> 66 էներգատեղակայանքներում բացահայտվել է 573 խախտում (2022թ.՝ 110 էներգատեղակայանք և 875 բացահայտված խախտում, 2021թ.՝ 97 էներգատեղակայանք և 821 բացահայտված խախտում), ինչը կազմում է բացահայտված խախտումների ընդհանուր թվի 27%-ը (2022թ.՝ ընդհանուր 2434 խախտումների՝ 17,9%-ը, 2021թ.՝ ընդհանուր 1579 խախտումների՝ 52%-ը): Հիմնական խախտումներն են.

✓ *գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման հրդեհային անվտանգության հրահանգների բացակայությունը – 45 դեպք,*

✓ *գազատարի տեխնիկական շահագործման պրոֆիլակտիկ պլանային վերանորոգումը չկատարելը – 46 դեպք,*

✓ *գազատարի տեխնիկական շահագործման՝ շրջայցային կամ տեխնիկական սպասարկման չկատարելը - 46 դեպք (2022թ.՝ 79 դեպք, 2021թ.՝ 69 դեպք):*

Վերստուգվել է (ըստ գործունեության բնագավառի) 84 էներգատեղակայանք, որի արդյունքում կատարված խախտումների քանակը նվազել է 17,6%-ով (2022թ.՝ 38 օբյեկտ, արդյունքում նվազել է 29,2%-ով, 2021թ.՝ 28 օբյեկտ, արդյունքում նվազել է 46,4%-ով):

<u>Գազափոխադրման բարձր ճնշման</u> 4 սուբյեկտում ստուգման ընթացքում բացահայտվել է 7 խախտում, այն խախտումների ընդհանուր քանակի 0,3% է կազմում (2022թ.՝ 11 սուբյեկտ 211 խախտումով, որը ընդհանուր խախտումների՝ 0,1% է, 2021թ.՝ 1 սուբյեկտ 2 խախտումով, որը ընդհանուր խախտումների՝ 8,7% է):

110կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքի՝ **<u>ենթակայանի և բաշխիչ սարքվածքի</u>** 7 ստուգումների արդյունքում բացահայտվել է 91 խախտում, որն էլ կազմում է խախտումների ընդհանուր քանակի 4,3%-ը (2022թ.՝ 56 էլեկտրատեղակայանք և 483 խախտում, որը ընդհանուր քանակի 19,8%-ն է, 2021թ.՝ 13 էլեկտրատեղակայանք և 129 խախտում, որը ընդհանուր քանակի 8,2%-ն է, 2020թ.՝ 8 էլեկտրատեղակայանք և 74 խախտում, որը ընդհանուր քանակի 7,6%-ն է): Վերստուգվել է (ըստ գործունեության

բնագավառի) 5 էներգատեղակայանք, որի արդյունքում կատարված խախտումների քանակը նվազել է 5,2%-ով:

110 կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքներում՝ **էլեկտրահաղորդման օդային գծերի** 2 ստուգումների ընթացքում բացահայտվել է 34 խախտում, այսինքն՝ բացահայտված խախտումների 1,6%-ը (2022թ.՝ 66 ստուգում 361 խախտումով, որը ընդհանուր 2434 խախտումների՝ 14,8% է, 2021թ.՝ 4 ստուգում 65 խախտումով, որը ընդհանուր 1579 խախտումների՝ 4,1% է):

2023 թվականին (ըստ գործունեության բնագավառի) իրականացված ստուգումների ժամանակ բացահայտված խախտումների գրաֆիկական պատկերները բերված է ստորև.



Հաշվետու ժամանակահատվածում իրականացված 84 վերստուգումների արդյունքում պարզվել է, որ տնտեսավարողների կողմից ամբողջովին վերացվել են 25 օբյեկտների թերությունները: Դրանք են՝ «ՌՈՍ ԳԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ, «ԱՐՎԵՏ» ՍՊԸ, «ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ՎԻՑԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ, «ՌՈՔ ԲԵՐԻ» ՍՊԸ, «ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ, «ՀՈՐԻԶՈՆ-95» ՍՊԸ, «ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈԹԵԼ» ՓԲԸ,

«ՀՈՎԻԿ ՉԱՔԱՐՅԱՆ» ՍՊԸ, «ԳՅՈՒՄՐՈՒ ԻՍՐԱՅԵԼ ՄԻԼԻՏՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐՉԱԴՊՐՈՑ» ՊՈԱԿ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, «ԿԱՐՍ» ՍՊԸ, «ԻՋԵՎԱՆԻ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ, «ԴՈԿ-ՌԱՉ» ՓԲԸ, «ՎԱՆ ՖՈՒԴ» ՍՊԸ, «ԲՈՒՅԼ» ՍՊԸ, «ԼԵՎՈՆ ՊՈՂՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ» Ա/Ձ, «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ՀՐԱՀԱՏ ՕՀԱՆՅԱՆ ՖՈԼԻԿԻ» Ա/Ձ, «ԳԵՏՆԱՏՈՒՆ» ՍՊԸ, «ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ (Տավուշի մարզ), «ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ (Արմավիրի մարզ), «ԱՌԱՄՆԱ» ՍՊԸ, «ԴԱՆ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ:

2023 թվականի վերստուգումների արդյունքում պարզվել է, որ նախորդ ստուգումների ընթացքում վերոհիշյալ 84 օբյեկտներում արձանագրված 1236 խախտումից 458-ը տնտեսավարող սուբյեկտների կողմից վերացվել են:



2023 թվականին իրականացված վերստուգումներից առաջ և հետո խախտումների քանակի համեմատական գրաֆիկական պատկերներն՝ ըստ գործունեության բնագավառի, բերված են ստորև.



2023 թվականին իրականացված ստուգումների 51,7%-ը կազմում են պլանային ստուգումները, իսկ 48,3%-ը՝ վերստուգումները (2022թ.՝ ստուգումները 78,2%-ը, վերստուգումները 21,8%-ը): 2023 թվականին իրականացված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3,2 օր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 1,8-ը (2022թ. ՝3 օր և 202 մարդ, 2021թ. ՝6,2 օր և 202 մարդ): 2023 թվականին իրականացված 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 2 օր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1.7-ը (2022թ.՝ 1,7 օր և 1,8 մարդ, 2021թ.՝ 2,4 օր և 3,2 մարդ):

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված էր կատարել 39 ստուգում կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում: Փաստացի իրականացվել է 28 ստուգում, ինչը կազմում է նախատեսվածի 71,8%-ը: 11 ստուգում չի իրականացվել, քանի որ կազմակերպությունները դադարեցրել են իրենց գործունեությունը: 2022 թվականին 29 նախատեսված ստուգումներից ավարտվել էր 21-ը (նախատեսված քանակի 72,4%-ը): 2021 թվականին 34 նախատեսված ստուգումներից ավարտվել էր 22-ը (նախատեսված քանակի 64,7%-ը):

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է մեկ ոչ պլանային ստուգում:

Ստուգումների և վերստուգումների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ բաշխվածությունը.



Ստուգումների արդյունքում 15 տնտեսավարող սուբյեկտներին տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր (2022թ.՝ 11, 2021թ.՝ 19), բացահայտվել է 66 (2022թ.՝ 91, 2021թ.՝ 77) խախտում, որոնցից առավել կրկնվողներն են.

✓ փոխադրումներ իրականացնողի տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործումը չի իրականացվում համապատասխան պարբերականությամբ և սահմանված ժամկետներում տեխնիկական զննության անցկացման պայմաններում – 11 տնտեսավարող սուբյեկտի մոտ:

✓ հավաքակայնում առկա չէ տրանսպորտային միջոցների նախաուղերթային տեխնիկական զննման՝ նախատեսված երկարության դիտափոսը (էստակադան) – 6 տնտեսավարող սուբյեկտի մոտ,

✓ հավաքակայնանում չի իրականացվում տրանսպորտային միջոցների վարորդներ նախաուղերթային բժշկական զննումը (առողջական վիճակի ամենօրյա զննումը) - 6 տնտեսավարող սուբյեկտի մոտ:

Ստուգումների արդյունքում պարզվել է, որ 14 տնտեսավարող սուբյեկտ (ստուգված օբյեկտների 50%) գործում է առանց խախտումների (2022թ.՝ 10, 2021թ.՝ 3): Դրանք են՝ «ԱՐՄԵՆԻԱՆ ԲԱՍ» ՍՊԸ, «ԱՐՓԱ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ, «ԱՆԱՐ» ՍՊԸ, «Վ. Լ. ԱՄԻՐՅԱՆՆԵՐ» ՍՊԸ, «ԽԱՉԱՏՈՒՐ ԵՎ ԴՄԻՏՐԻ» ՍՊԸ, «ՄԻԼԼԱՐԵՆ» ՍՊԸ, «ԲԱՍ-ԼԻԼ» ՍՊԸ, «ՃԱՐՏ-ՏՐԱՆՍ» ՍՊԸ, «ԱՐԴԻՆԻ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ, «ԿԱՐԵՆ-ԳԱՐԻԿ» ՍՊԸ, «ՄԱՆՎԵԼ-ՍՈՒՎԱՐ» ՍՊԸ, «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ, «ԱՐԹՈՒՐ ԲԱԲԱՅԱՆ» Ա/Ձ, «ՍՏՅՈՊԱ ՀԱԿՈԲՅԱՆ» Ա/Ձ:

2023 թվականին կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում իրականացվել է 18 վերստուգում (2022թ.՝ 8, 2021թ.՝ 22), որոնց արդյունքում 11 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներին տրվել են տեղեկանքներ թերությունների բացակայության վերաբերյալ: Առանց թերությունների են գործում հետևյալ կազմակերպությունները՝ «ԲԻԳ ՔԱՍԹԼ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ, «ՌԱՄ-ԱԿԱ» ՍՊԸ, «ՏՐԱՆՍ ԿՈՄՖՈՐՏ-999» ՍՊԸ, «ԷՍ-ԲՈՒՍ» ՍՊԸ, «ԳԱ-ԼԻ» ՍՊԸ, «ՄԱՐԻԱՄ-79» ՍՊԸ, «Ռ ԵՎ Հ ՏՐԱՆՍ» ՍՊԸ, «ՆԻԿ-ԹԱՄ» ՍՊԸ, «ՄՈՒՇ-ԱՐՄԵՆ» ՍՊԸ, «ՀՈՎՍԵՓ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ» Ա/Ձ, «ԱՐՇԱԿ ՄԿՈՅԱՆ» Ա/Ձ: Վերստուգումների արդյունքում պարզվել է, որ վերացվել է ընդհանուր առմամբ 54 խախտում:



2023 թվականին իրականացված ստուգումների 59,6%-ը կազմում են պլանային ստուգումները, 2,1%-ը՝ ոչ պլանային ստուգումը, իսկ 38,3%-ը՝ վերստուգումները: 1 պլանային ստուգման միջին տևողությունը կազմել է 2,3 օր (2022թ.՝ 2,7, 2021թ.՝ 3,9), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,9-ը (2022թ.՝ 2, 2021թ.՝ 2,1): 1 ոչ պլանային ստուգման միջին տևողությունը կազմել է 1 օր (2022թ.՝ 2,5, 2021թ.՝ 1,6), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր, հատկացված մարդկային ռեսուրսը կազմել է 3 (2022թ.՝ 2, 2021թ.՝ 2): 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,2 օր (2022թ.՝ 1,9, 2021թ. ՝ 2,1), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,6-ը (2022թ.՝ 1,7, 2021թ. ՝ 2,1):

2022 թվականին 29 նախատեսված ստուգումներից ավարտվել էր 21-ը (նախատեսված քանակի 72,4%-ը): 2021 թվականին 34 նախատեսված ստուգումներից ավարտվել էր 22-ը (նախատեսված քանակի 64,7%-ը):

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Քաղաքաշինության բնագավառում 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 282 ստուգումներից իրականացվել է 219-ը, ինչը կազմում է նախատեսված ընդհանուր քանակի 78%-ը: Միաժամանակ իրականացվել է 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ու տեղափոխված 3 ստուգում: 39 օբյեկտ չի ստուգվել՝ փաստացի շինարարական աշխատանքների բացակայության (18 օբյեկտ), ավարտական ակտի և այն ստանալու դիմումի (16 օբյեկտ), սեփականաշնորհման վկայականի առկայության (1 օբյեկտ), դրական եզրակացության (1 օբյեկտ), համայնքի ղեկավարի կողմից շին.թույլտվության դադարեցման (1 օբյեկտ) հիմքով: Կրկնակի տրամադրված շինարարական թույլտվությունների պատճառով ստուգումների տարեկան ծրագրում 2 հասցե կրկնվում է: Ստուգման 24 հանձնարարագրի կատարումն ընթացքի մեջ է:

Միաժամանակ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 25 ոչ պլանային ստուգում, որից 15-ը պետական մարմիններից ստացված գրությունների, իսկ 10-ը՝ հանրության բողոքների հիման վրա:

Իրականացվել է 1 վերստուգում, որի արդյունքում պարզվել է, որ օբյեկտում 25 խախտումներից վերացվել են 22-ը:

Ընդհանուր առմամբ իրականացվել է 249 ստուգում/վերստուգում, որից 117-ը (47%) Երևանում, 21-ը (8,4%)՝ Սյունիքի, 7-ը (2,8%)՝ Լոռու, 23-ը (9,2%)՝ Կոտայքի, 17-ը (6,8%)՝ Շիրակի, 13-ը (5,2%)՝ Արմավիրի, 10-ը (4%)՝ Արարատի, 4-ը (1,6%)՝ Արագածոտնի, 5-ը (2%)՝ Գեղարքունիքի, 22-ը (8,8%)՝ Տավուշի և 9-ը (3,6%)՝ Վայոց Ձորի մարզերում, Երևանի քաղաքապետարանում իրականացված ստուգման արդյունքներն անփոփման փուլում են:

2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 654-ից տարվա ընթացքում իրականացվել էր 366-ը (56%-ը), իսկ 2021 թվականի նախատեսված 757 ստուգումներից տարվա ընթացքում ավարտվել էր 439-ը՝ (58%-ը): 2022 թվականին ավարտվել էր 87 ոչ պլանային ստուգում, իսկ 2021 թվականին՝ 65:

2023 թվականին ստուգումների արդյունքում խախտումների բացակայության վերաբերյալ կազմվել է 75 տեղեկանք (2022 թվականի ընթացքում՝ 223 տեղեկանք, 2021 թվականին՝ 244), իսկ մնացած օբյեկտների տնտեսավարող սուբյեկտներին տրվել են ցուցումներ՝ արձանագրված խախտումները վերացնելու պահանջով: 2023-ին իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է 742 խախտում (2022 թվականին՝ 1767 խախտում, 2021 թվականին՝ 1645 խախտում), որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Հիմնական խախտումները վերաբերում են.

- **<u>շինարարություն իրականացնող</u>** տնտեսավարող սուբյեկտների (կապալառու) մոտ հայտնաբերվել է 322 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 43,28%-ը (2022թ. `685 խախտում, իսկ 2021թ.՝ 619 խախտում): Առավել կրկնվող խախտումներն են.

✓ *շինարարությունը չի իրականացվում համաձայնեցված նախագծին համապատասխան՝ 150 դեպք,*

✓ *շինարարության վարման մատյանում բացակայում են կապալառուի կողմից կատարված համապատասխան նշումներ՝ 43 դեպք,*

✓ *բացակայում է բետոնի փորձարկման ակտը՝ 26 դեպք,*

✓ *շինարարական աշխատանքների ընդհանուր մատյանը չի լրացվում՝ 37 դեպք,*

✓ *լրացված չէ ծածկված աշխատանքների ընդունման ակտը՝ 25 դեպք.*

- շինարարության **<u>որակի տեխնիկական հսկողություն</u>** իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 180 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 24,19%-ը (2022թ.՝ 367 խախտում, 2021թ.՝ 402 խախտում): Առավել կրկնվող խախտումներն են.

  ✓ *շինարարության վարման մատյանում բացակայում են շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողի համապատասխան նշումները՝ 118 դեպք,*

  ✓ *տեխնիկական հսկողություն իրականացնողի կողմից շինարարության վարման մատյանը չի լրացվում՝ 25 դեպք,*

  ✓ *շինարարության որակի տեխնիկական հսկողի կողմից ծածկված աշխատանքների ակտերը չեն ստորագրվում՝ 23 դեպք.*

- շինարարության նկատմամբ **<u>հեղինակային հսկողություն</u>** իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 163 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 21,91%-ը (2022թ. ՝ 264 խախտում, 2021թ.՝ 203 խախտում): Առավել կրկնվող խախտումներն են.

  ✓ *շինարարության վարման մատյանում բացակայում են հեղինակային հսկողություն իրականացնողի համապատասխան նշումները՝ 103 դեպք,*

  ✓ *հեղինակային հսկողություն իրականացնողի կողմից չի լրացվել շինարարության վարման մատյանը՝ 35 դեպք,*

  ✓ *բացակայում են հեղինակային հսկողի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերը՝ 25 դեպք.*

- **<u>համայնքի ղեկավարի</u>** կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 42 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 5,65%-ը (2022թ.՝ 274 խախտում, 2021թ.՝ 215 խախտում).

- **<u>կառուցապատողների</u>** մոտ հայտնաբերվել է 32 խախտում՝ ընդհանուր խախտումների 4,3%-ը (2022թ. 161 խախտում, իսկ 2021թ. նույն ժամանակահատվածում՝ 98 խախտում): Առավել կրկնվող խախտումներն են.
  - ✓ *տեղեկանքում նշված չէ շինարարությունն սկսելու ժամկետը՝ 8 դեպք,*
  - ✓ *տեղեկանքում նշված չէ շինարարական աշխատանքների կապալառուի անվանումը և լիցենզիայի համարը՝ 6 դեպք,*
  - ✓ *տեղեկանքում նշված չէ շինարարության տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության անվանումը և լիցենզիայի համարը՝ 6 դեպք*
  - ✓ *տեղեկանքում նշված է շինարարության հեղինակային հսկողությունն իրականացնող կազմակերպության անվանումը և լիցենզիայի համարը՝ 7 դեպք.*
- **<u>փորձաքննություն իրականացնող</u>** տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 5 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0,67%-ը (2022թ. 15 խախտում, իսկ 2021թ. նույն ժամանակահատվածում՝ 7 խախտում).
- **<u>ճարտարապետաշինարարական նախագիծ մշակող</u>** կազմակերպության գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ խախտում չի հայտնաբերվել (2022թ. 1 խախտում, իսկ 2021թ.՝ 6 խախտում):

Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների 89,56% կազմում են պլանային ստուգումները, 10,04%՝ ոչ պլանային, իսկ 0,4%՝ վերստուգումը: 1 պլանային ստուգման միջին տևողությունը կազմել է 4,38 օր, ոչ պլանային ստուգման դեպքում՝ 2,6 օր, վերստուգման դեպքում՝ 1 օր: Յուրաքանչյուր պլանային ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը կազմել է 2,49, ոչ պլանային ստուգման համար՝ 1,72, իսկ վերստուգման համար՝ 2:

2022 թվականի տարեկան ծրագրով իրականացված 1 ստուգման միջին տևողությունը կազմել էր 4,81 օր, ոչ պլանային ստուգման դեպքում՝ 2,49 օր, վերստուգման դեպքում՝ 1,58 օր: Յուրաքանչյուր պլանային ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չէր գերազանցել 2,03, ոչ պլանային ստուգման համար՝ 1,97, իսկ վերստուգման համար՝ 1,67: 2021 թվականին իրականացված 1 ոչ պլանային ստուգման միջին տևողությունը կազմել էր 6,98 օր, ոչ պլանային ստուգման՝ 1,6 օր, յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չէր գերազանցել 2,01-ը, ոչ պլանային ստուգման՝ 1,94-ը:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված էին ստուգումներ ՀՀ 8 մարզերում, որոնցից 8-ն էլ իրականացվել են: Միաժամանակ իրականացվել է նաև 13 ոչ պլանային ստուգում, որոնցից 2-ը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, 9-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ևս 2-ը հանրությունից ստացված բողոքների հիման վրա:

2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված էր 11 ստուգում, որոնցից իրականացվել են 10-ը՝ 90,9% (ընդհանուր ստուգումների 35,71%-ը): Իրականացվել էր նաև 18 ոչ պլանային ստուգում, որոնցից 2-ը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, 16-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև հանրությունից ստացված բողոքների հիման վրա:

2021 թվականի տարեկան ծրագրով նախատեսված էր իրականացնել 10 ստուգում, որոնք իրականացվել են ամբողջ ծավալով (ընդհանուր ստուգումների 37,04%-ը): Իրականացվել էր 17 ոչ պլանային ստուգում, որոնցից 4-ը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, 13-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև հանրությունից ստացված բողոքների հիման վրա:



2023 թվականին իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված 266 խախտումներից 96-ը (36,1%) արձանագրվել է Արմավիրի, 83-ը (31,2%)՝ Արարատի, 64-ը (24,06%)՝ Կոտայքի, 10-ը (3,76%)՝ Շիրակի, 7-ը (2,63%)՝ Լոռու, 4-ը (1,5%)՝ Գեղարքունիքի և 2-ը (0,75%)՝ Արագածոտնի մարզերում: Արձանագրված 266 խախտումներից 112-ը (ընդհանուր քանակի 42,11%) բացահայտվել է Տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված ստուգումների ժամանակ:

	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿ
1	Արագածոտնի մարզի Ապարան համայնք	2
2	Շիրակի մարզի Գյումրի համայնք	1
3	Արարատ մարզի Մասիս համայնք	65
4	Արմավիրի մարզի Արաքս համայնք	85
5	Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք	4
6	Լոռու մարզի Սպիտակ համայնք	7
7	Կոտայքի մարզի Եղվարդ համայնք	64
8	Շիրակի մարզի Մարալիկ համայնք	9
9	Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք	10
10	Արարատ մարզի վեդի համայնք	18
11	Արմավիրի մարզի Փարաքար համայնք	1

2022 թվականի ստուգումների արդյունքում արձանագրված 242 խախտումներից 211-ը (ընդհանուր քանակի 87,45%) բացահայտվել է Տարեկան ծրագրի շրջանակներում, իսկ 2021 թվականին՝ 851 խախտում, որոնցից 637-ը՝ Տարեկան ծրագրով:



Խախտումները վերաբերում են պաշտոնեական դիրքի, հողամասի օտարման և տրամադրման հետ առնչվող հարցերին: Բոլոր ստուգված համայնքներում իրականացվել են խորհրդատվական և բացատրական աշխատանքներ: Բացահայտված խախտումների վերաբերյալ 13 հաղորդում է ներկայացվել իրավասու մարմիններին (2022 թվականին՝ 26, 2021 թվականին՝ 23):

Տարեկան ծրագրով իրականացված ստուգումները կազմում են 2023 թվականին իրականացված ստուգումների 38,1%-ը, իսկ ոչ պլանային ստուգումները՝ 61,9%-ը: Տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման տևողությունը կազմել է 8,2 օր, ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը՝ 2,25: Ոչ պլանային ստուգումների միջին տևողությունը կազմում է 3,77 օր, մարդկային ռեսուրսը՝ 2,23:

2022 թվականին Տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման տևողությունը կազմել էր 8,8 օր, ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը՝ 2,6: Ոչ պլանային ստուգումների միջին տևողությունը կազմում էր 3,28 օր, մարդկային ռեսուրսը՝ 1,89: 2021 թվականին Տարեկան ծրագրով 1 ստուգման միջին տևողությունը կազմել էր 9,3 օր, իսկ ոչ պլանային ստուգմանը՝ 3,6 օր: Տարեկան ծրագրով յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2.8-ը, իսկ ոչ պլանային ստուգման համար՝ 2-ը:

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Տեսչական մարմնի կողմից հաշվառվել և վերլուծվել է ՀՀ-ում 2023 թվականի ընթացքում արձանագրված 5248 հրդեհի դեպք (2022 թվականին՝ 5428, 2021-ին՝ 6290):

2023 թվականին տեղի ունեցած հրդեհներից զոհվել է 19



(7 մարդ՝ բնակելի տարածքում, 7-ը՝ ավտոմեքենաներում, 2-ը՝ ուսումնական հաստատությունում, 1-ը՝ գազալցակայանում, 1-ը՝ ավտոտնակում, 1-ը՝ սոցիալական և առողջապահական օբյեկտում), իսկ վնասվածքներ է ստացել 103 մարդ, որոնցից 30-ը՝ բնակելի տարածքում, 41-ը՝ մարդատար մեքենաների հրդեհների հետևանքով, 10-ը՝ ԱԳԼՃԿ-ում և ԲԼԿ-ում, 7-ը՝ առևտրի, հասարակական սննդի և սպասարկման օբյեկտներում, 15-ը՝ այլ վայրերում:

Ստորև բերվում է 2023, 2022 և 2021 թվականների հրդեհի զոհերի և վնասվածք ստացածների համեմատական գրաֆիկը.



2023 թվականի հրդեհների 34,38% արձանագրվել է Երևան քաղաքում, ըստ մարզերի հրդեհներն ունեն հետևյալ բաշխվածությունը.



Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 799 **հրդեհատեխնիկական հետազոտություն** (2022 թվականին՝ 696 ՀՏՀ, 2021 թվականին՝ 672 ՀՏՀ): Կատարած հրդեհատեխնիկական հետազոտություններն ըստ տարածքային միավորների բաշխված են հետևյալ կերպ.



2023 թվականի ՀՏՀ-ների արդյունքում արձանագրվել է 3130 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



74 բենզալցակայանի հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում բացահայտվել է 336 խախտում: 6 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *հեղուկ վառելիքի ստորգետնյա տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն – 51 դեպք,*

✓ *բենզալցակայանի տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով – 42 դեպք,*

✓ *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 36 դեպք:*

Նշված ժամանակահատվածում վերահսկողական գործառույթ է իրականացվել **54 գազալցավորման կայանում:** Արդյունքում բացահայտվել է 320 խախտում: Երեք օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Հիմնական խախտումներն են.

✓ *գազալցակայանի տարածքը պաշտպանված չէ շանթապաշտպանության համակարգով – 28 դեպք,*

✓ *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ3 տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 28 դեպք,*

✓ *գազալցակայանի տարածքում տեղակայված շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 26 դեպք:*

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական 11 հիմնարկի հակահրդեհային վիճակի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է 167 թերություն, որոնց վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղարին:

Երևանի Կենտրոն վարչական շրջանի հասարակական սննդի 109 օբյեկտներում բացահայտվել է 446 խախտում:

ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվել է թվով 63 հրդեհատեխնիկական հետազոտություն: Արդյունքում խախտումներ չեն բացահայտվել 7 ԲՈՒՀ-երում: 56 ԲՈՒՀ-երում արձանագրվել է ընդհանուր առմամբ 438 խախտում:

Մինչև 800 նստատեղով մշակութային 78 հիմնարկում բացահայտվել է 336 խախտում: 22 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

2023 թվականի հուլիս ամսվա ընթացքում հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում իրականացվել են հրդեհատեխնիկական հետազոտություններ **9 ճամբարում**: Բոլոր ճամբարներում արձանագրվել են խախտումներ՝ ընդհանուր առմամբ 33:

Բոլոր հաստատությունների տնօրեններին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն և տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր՝ բացահայտված խախտումների վերացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար: Իրականացվել է վարչարարություն:

Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է **1174** **<u>եզրակացություն</u>** (2022-ին՝ 889, 2021 թվականին՝ 681) նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատասխանելիության վերաբերյալ:



Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 932 օբյեկտների (2022-ին՝ 829, 2021 թվականին՝ 761) **շահագործման ընդունող հանձնաժողովների** աշխատանքներին: Արդյունքում 2023 թվականի ընթացքում տրվել է 735 դրական (2022-ին՝ 651) և 197 բացասական (2022-ին՝ 178) եզրակացություն:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են **հրդեհի ազդանշանի ինքնաշխատ** 11 համակարգի փորձարկման աշխատանքներին:

<u>ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ</u>

ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում 2023 թվականին իրականացվել է 1957 տեխնիկական ստուգում, որից 1194-ը՝ (61%) էլեկտրաէներգետիկական և 763-ը՝ (39%) գազամատակարարման համակարգերում (2022թ.՝ 1698 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 1049-ը՝ (61,8%) և 649-ը՝ (38,2%), 2021թ.՝ 1678 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 912 (54,4%) և 766 (45,6%)):



Արդյունքում տրվել է 1515 գործարկման եզրակացություն, իսկ թվով 442 տեղակայանքների գործարկումներ՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար ակտ-կարգադրագրերով մերժվել են (2022թ.՝ 1348 գործարկում և 350 մերժում, 2021թ.՝ 1332 գործարկում և 346 մերժում):



Հաշվետու տարվա ընթացքում տրված գործարկման դրական և բացասական եզրակացությունների քանակի բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը.



2023 թվականին էներգատեղակայանքներում գրանցվել է 19 մահվան ելքով պատահար (2022 և 2021թթ.՝ 21-ական դեպք): Մահացու ելքով պատահարների քանակական բաշխվածությունն ըստ մարզերի և տարիների ունի հետևյալ պատկերը.



Տեսչական մարմնի աշխատակիցները 2023 թվականին մասնակցել են մահացու ելքով 3 պատահարի մասնագիտական քննության:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում տրանսպորտի անվտանգության մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի տարածքներում գործող «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում, ինչպես նաև այդ տարածքներից դուրս կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող

երթուղիների սկզբնակետ/վերջնակետերում պարբերաբար իրականացվել է միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների սպասարկման կազմակերպման գործընթացի, բեռնափոխադրումների, թեթև մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության, տրասպորտային միջոցների շահագործման և տեխնիկական զննության անցկացման կայանների, գազաբալոնների տեղադրման/վկայագրման կայանների գործունեության, օտարման շերտերի և պաշտպանական գոտիների նկատմամբ **63274** վերահսկողական միջոցառում (**2022** թվականին՝ **27361**, **2021**-ին՝ **5269**), ինչը **2,3** անգամ ավելի է, քան նախորդ տարվա ընթացքում կատարած աշխատանքը:



Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է տրանսպորտային միջոցների վրա **<u>գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների</u>** փորձարկման կայաններում իրավական ակտերի նկատմամբ **199** վերահսկողական գործառույթ (**2022**թ.՝ **126**), ինչպես նաև գազալցակայաններում իրականացվել է տրանսպորտի բնագավառում իրավական ակտերի նկատմամբ **1310** վերահսկողական գործառույթները (**2022**թ.՝ **935**): Արդյունքում կազմվել է բացահայտված խախտումների վերաբերյալ **4** արձանագրություն: Իրականացվում է վարչարարություն:

<u>Թեթև-մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների</u> նկատմամբ իրականցվել է **285** վերահսկողական

միջոցառում, ինչը կազմում է ընդհանուր քանակի 0,45%-ը: Արդյունքում կազմվել է բացահայտված խախտումների վերաբերյալ 104 արձանագրություն: Իրականացվում է վարչարարություն:

Տեխնիկական զննության կայաններում իրականցվել է 432 վերահսկողական միջոցառում (2022թ.՝ 294, 2021թ.՝ 171), ինչը կազմում է վերահսկողական միջոցառումների ընդհանուր քանակի 0,7%: Արդյունքում կազմվել է բացահայտված խախտումների վերաբերյալ 50 արձանագրություն: Իրականացվում է վարչարարություն:

2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի տարածքային բաժինների (բացառությամբ Երևանի) տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են մարզերի տարածքով անցնող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված **գովազդային վահանակների** օրինականության նկատմամբ վերահսկողական միջոցառում: Հաշվետու ժամանակաշրջանում տարածքային բաժինների մասնագետների կողմից գույքագրվել են միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 451 (2022թ.՝ 811, 2021թ.՝ 599) գովազդային վահանակներ: Արդյունքում կազմվել է բացահայտված խախտումների վերաբերյալ 109 արձանագրություն: Իրականացվում է վարչարարություն:

Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ իրականացվել է 2650 վերահսկողական միջոցառում (2022 թվականին՝ 2390, 2021թ.՝ 3796), ինչը կազմում է ընդհանուր քանակի 4.2%: Արդյունքում կազմվել է բացահայտված խախտումների վերաբերյալ 295 արձանագրություն: Իրականացվում է վարչարարություն:

Բեռնափոխադրումների նկատմամբ իրականցվել է 57871 վերահսկողական միջոցառում (2022թ. ՝ 22482, 2021թ.՝ ընդհամենը 3), ինչը կազմում է վերահսկողական միջոցառումների ընդհանուր քանակի 91,5%-ը: Մասնավորապես, վերահսկողական միջոցառումներն իրականացվել են Սյունիքի անշարժ կշռման կայանում թվով 56902 (2022թ. ՝ 21292), Արմավիրի անշարժ կշռման կայանում՝ 889 (2022թ. ՝ 927) և շարժակամ կշեռքներով տարբեր մարզերում՝ 80 (2022թ. ՝ 263): Արդյունքում կազմվել է բացահայտված խախտումների վերաբերյալ 3687 արձանագրություն: Իրականացվում է վարչարարություն:



իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի



շրջանակներում: Գրաֆիկով պատկերված է այս ոլորտում կատարված աշխատանքի բաշխվածությունն ըստ մարզերի:

2022 թվականի ընթացքում կատարվել էր 1267 դիտարկում, որոնցից 559-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: 2021 թվականի ընթացքում կատարվել էր 2560 վերահսկողական միջոցառում, որից 747-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և

սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում:



2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են **ավարտված շինարարական** 3275 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, այդ թվում՝ Երևանում՝ 793 (24%), Կոտայքում՝ 443 (13%), Արմավիրի մարզում՝ 381 (12%), մնացածն՝ ըստ պատկերի.



2021-2023 թվականների ընթացքում այս ոլորտում կատարված աշխատանքն ունի հետևյալ համեմատական պատկերը.



Արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 1721 դրական և 1323 բացասական եզրակացություն (2022թ.՝ 1699 դրական և 1269 բացասական եզրակացություններ, իսկ 2020թ.՝ 1748 դրական և 1026 բացասական

եզրակացություններ), որոնք ըստ մարզերի այն ունեն հետևյալ գրաֆիկական բաշխվածությունը.



Միաժամանակ Տեսչական մարմնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչության կողմից ուսումնասիրվել են 369 ճարտարապետաշինարարական նախագծեր (միջանկյալ համաձայնեցման շրջանակներում), ինչի արդյունքում վարչության կողմից 237 նախագծերի վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն՝ սակավաշարժուն խմբերի միջոցառումները չապահովելու համար: Բացասական եզրակացություն ստացած 237 նախագծերից 180-ը □76%□ լրամշակվել է:

Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վերահսկողական աշխատանքների ընթացքում ՀՀ ամբողջ տարածքում հայտնաբերվել է 129 **<u>ինքնակամ կառույց</u>**, ինչը կրկնակի փոքր է նախորդ տարվա և 3.7 անգամ փոքր է 2021 թվականի ընթացքում բացահայտված ինքնակամների քանակից:



Ինքնակամ կառույցների 40%-ը գտնվում է Լոռու մարզում, 14%-ը՝ Կոտայքում, 12%-ն՝ Արմավիրի մարզում, Տավուշում՝ 8%-ը, Արարատում՝ 7%, Գեղարքունիքում և Շիրակում՝ 5-ական տոկոս, Արագածոտնի մարզում՝ 4%, Երևանում՝ 3%, Սյունիքի և Վայոց ձորի

մարզերում՝ 1-ական տոկոս: Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ, այն է, մարզպետներին և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին տրամադրվել են իրազեկող բնույթի գրություններ: Համայնքների ղեկավարներին ներկայացվել են առաջարկություններ՝ իրենց իրավասության սահմաններում ինքնակամ շինարարական աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ և հետևանքները վերացնելու ուղղությամբ:

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության և տնտեսավարող սուբյեկտների կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 829 բողոք, որից 542-ը (65,38%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 134-ը (16,16%)՝ տրանսպորտային անվտանգության, 68-ը (8,2%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 76-ը (9,17%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 9-ը (1,09%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության և տնտեսավարող սուբյեկտների կողմից հասցեագրվել էր ընդհանուր առմամբ 684 բողոք, որից 432-ը (63,16%) վերաբերում էր քաղաքաշինության բնագավառին, 114-ը (16,67%)՝ տրանսպորտային անվտանգության, 78-ը (11,4%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 56-ը (8,19%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 4-ը (0,58%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:

2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հասցեագրվել էր 704 բողոք, որից 502-ը (71,3%) քաղաքաշինության բնագավառի, 74-ական (10,5%)՝ տրանսպորտի անվտանգության և հրդեհային և տեխնիկական անվտագության, 35-ը (4,97%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 19-ը (2,7%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառների վերաբերյալ:

2021-2023 թվականների ընթացքում ստացված բողոքների համեմատական գրաֆիկն ունի հետևյալ արտացոլումը.



2023 թվականի ընթացքում հանրությունից և տնտեսավարողներից ստացված բողոքներն ըստ ամիսների ունեն հետևյալ բաշխվածությունը՝



Ընդ որում, ստացված բողոքների ընդհանուր քանակի 58,4%-ը վերաբերում է Երևանում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կամ գտնվող օբյեկտներին, մնացածն՝ ըստ պատկերի.



2023 թվականի ընթացքում ստացված 829 բողոքներից 198-ը հիմնավոր չի, 33-ը վերահասցեագրվել է: Հիմնավոր 306 բողոքից 2023 թվականին լուծում է ստացել 251-ը (հիմնավոր բողոքների 81.7%): Ուսումնասիրության փուլում է 342 բողոք, որից 278-ը վերաբերում է քաղաքաշինության, 1-ը՝ տրանսպորտի, 28-ը՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 35-ը՝ էներգետիկայի և էներգասպառման բնագավառներին:

2023 թվականի ընթացքում հանրությունից թեժ գծով ստացվել է 251 բողոք, ինչը կազմում է ներկայացված բողոքների 30.27%: 2022 թվականին թեժ գծով ստացված բողոքները (269 բողոք) կազմում էին ընդհանուր քանակի 39.3%ն, իսկ 2021-ին (201 բողոք)՝ 28.55%-ը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում հանրությունից ստացված 68 դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմնավոր են 50-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 73,5%: 43 բողոք (63,24%) ստացվել է թեժ գծով: Հիմնավոր բողոքներում բարձրացված հարցերը վերաբերում են գործող օբյեկտներում հրդեհային

անվտանգության պահանջների խախտումներին: 26 բողոք (հիմնավորների 52%) արդեն իսկ լուծում է ստացել: 2 բողոք վերահասցեագրվել է, հիմնավոր չի 12 բողոք: 28-ն ընթացքի մեջ են:

52 բողոք (76,47%) վերաբերում է Երևանում, 6-ը (8,82%)՝ Լոռու, 5-ը (7,35%)՝ Արարատի, 2-ը Շիրակի և մեկական՝ Արմավիրի, Սյունիքի և Կոտայքի մարզերում գտնվող օբյեկտներին:

2022 թվականին հանրությունից ստացված 78 դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել էր, որ հիմնավոր են 36-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 46,15%: Հիմնավոր բողոքների 69,44% (25 հատ) արդեն իսկ լուծում էր ստացել, 2-ի լուծումը դուրս էր Տեսչական մարմնի լիազորությունների շրջանակներից, 23-ն ընթացքի մեջ էին: Հիմնավոր չէին 28 բողոք: Հանրությունից ստացված 5 բողոքի հիման վրա իրականացվել էին ստուգումներ: 35 բողոք (44,87 %) ստացվել էր թեժ գծով:

2021 թվականի ընթացքում քաղաքացիներից, իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ստացվել էր 74 դիմում-բողոք: Թեժ գծով ստացվել էր 22 բողոք (ընդհանուր քանակի 29,73%): Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել էր, որ հիմնավոր են 35-ը, ինչը կազմում էր ընդհանուր քանակի 47,3%, հիմնավոր չէին 31-ը (ընդհանուր քանակի 42%), ևս 20 բողոք գտնվում էին ուսումնասիրության ընթացքում: Հիմնավոր բողոքներից 23-ը (հիմնավորների 65,71%) լուծում էր ստացել: Հանրությունից ստացված 8 բողոքի հիման վրա իրականացվել էին ստուգումներ:

2021-2023 թվականների ընթացքում հանրությունից ստացված բողոքների ընդհանուր քանակի, հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 248 գրություն, որից 221-ը (89,1%) արդեն իսկ լուծում է ստացել, 16-ը գտնվում է ընթացքի մեջ:

2022 թվականին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 194 գրություն, որից 189-ը (97,4%) նույն տարվա ընթացքում լուծում էր ստացել: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 20 գրության հիման վրա իրականացվել էին ստուգումներ:

2021 թվականին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 272 գրություն, որից 264-ը (97%) լուծում էր ստացել 2021 թվականի ընթացքում:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում հանրությունից ստացված 76 բողոքներից հիմնավոր են 44-ը (ընդհանուր քանակի 58%), որոնցից լուծում են ստացել 31-ը (հիմնավոր բողոքների 70,4%), ընթացքի մեջ են գտնվում 35-ը: Բողոքներից 11-ը (14,5 %) ստացվել է թեժ գծով: ՀՀ վարչապետի աշխատակազմից վերահասցեագրվել է 13 բողոք, որից 4-ը հիմնավոր չեն, 8-ը հիմնավոր են և արդեն լուծում են ստացել, իսկ 1-ն ուսումնասիրման փուլում է:

Հիմնավոր բողոքների 47,7%-ը վերաբերում է մայրուղային գազատարների և էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիների խախտումներին, 16%-ը՝ տեխնիկական նորմերի խախտումներով տեղադրված հենասյուներին:

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումներում բարձրացված հարցերը ուսումնասիրվում են, ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները էներգետիկայի բնագավառում հասարակության անվտանգությունը և հարմարավետությունն ապահովելու ուղղությամբ: Մշտապես տրամադրվում է իրավախորհրդատվական աջակցություն:

Բողոքների բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը.



2022 թվականի ընթացքում հանրությունից ստացված 56 բողոքներից հիմնավոր էին 33-ը (ընդհանուր քանակի 59%), որոնցից տարվա ընթացքում լուծում էին ստացել 26-ը (հիմնավորների 85,7%): Բողոքների 20 % ստացվել էր թեժ գծով:

2021 թվականի ընթացքում հանրությունից և տնտեսավարողներից ստացված 35 բողոքներից 26-ը (74,28%) հիմնավոր էին, 8-ը (22,8%)՝ ոչ հիմնավոր: Հիմնավոր բողոքներից 21-ը լուծում էր ստացել (հիմնավորների 80,76%): Թեժ գծով բողոքներ չէին արձանագրվել:

2021-2023 թվականների ընթացքում ստացված բողոքների ընդհանուր քանակի, հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 17 գրություններից 12-ը լուծում են ստացել: 2022 թվականին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 5 գրություններից 2-ը լուծում էին ստացել նույն ժամանակահատվածում, 2-ն էլ ընթացքի մեջ էին:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրված 134 բողոքներում բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ տրանսպորտային անվտանգության վարչության և տարածքային բաժինների տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են առարկայական ուսումնասիրություններ, դիտարկումներ և վերահսկողական գործառույթներ: Բողոքների բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը



Բոլոր հիմնավոր բողոքներն (75 հատ) արդեն իսկ լուծում են ստացել, վերահասցեագրվել է 5 բողոք, հիմնավոր չի 53-ը: Ընթացքի մեջ է 1-ը: Բողոքներից 80-ը (59,7%) ներկայացվել է թեժ գծով: Հիմնավոր բողոքներում բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են.

- ✓ *չվացուցակների խախտումներին՝ 30,*
- ✓ *երթուղու չշահագործմանը՝ 7,*
- ✓ *ապօրինի ուղևորափոխադրումներին՝ 7:*

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրված 114 բողոքներից հիմնավոր են 52-ը, որոնցից 44-ը (84,62%) լուծում էր ստացել նույն տարվա ընթացքում, 4 խնդրի լուծումներ դուրս են Տեսչական մարմնի լիազորությունների շրջանակներից: Հիմնավոր չէին 63 բողոք: 3-ը ընթացքի մեջ են: Բողոքներից 79-ը (69,3%) ներկայացվել է թեժ գծով:

2021 թվականին տրանսպորտի անվտանգության հարցերով Տեսչական մարմին հասցեագրված 74 բողոքներից 59-ը (79,73%) ներկայացվել էին թեժ գծով: Հանրությունից ստացված հիմնավոր 50 բողոքներից լուծում էին ստացել 43-ը (86%), հիմնավոր չէին 23 բողոք (ընդհանուր քանակի 31%):

2021-2023 թվականների ընթացքում հանրությունից ստացված բողոքների ընդհանուր քանակի, հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 107 գրություն, որից 94-ը (87,8%) արդեն իսկ լուծում են ստացել, 15-ը գտնվում է ընթացքի մեջ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 1 գրության հիման վրա իրականացվել է ստուգում:

2022 թվականին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 47 գրություն, որից 41-ը (87,23%) արդեն իսկ լուծում էին ստացել, 6-ը գտնվում էր ընթացքի մեջ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմինն ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 542 (117-ը թեժ գծով) բողոք: 2023 թվականի ընթացքում հանրությունից ստացված բողոքներից 128-ը հիմնավոր են (բողոքների 23,6%), 110-ն (հիմնավոր բողոքների 85,9%) արդեն իսկ լուծում են ստացել: Քաղաքաշինության բնագավառում հանրությունից ստացված բողոքների բաշխումն ըստ տարածքային միավորների ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



Դիմումներում նշված հասցեներում կատարվել է մասնագիտական տեղազննություն, ստուգվել է իրականացվող շինարարական աշխատանքների, առկա քաղաքաշինական փաստաթղթերի տրման օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին: Կատարված աշխատանքի արդյունքում պարզվել է, որ խնդրահարույց և առավել կրկնվող խնդիրները վերաբերվում են հետևյալին.

- ✓ *շինարարական նորմերի խախտմանը՝ 214 բողոք,*
- ✓ *ապօրինի/ինքնակամ շինարարությանը և հողազավթմանը՝ 65 բողոք:*

2022 թվականին Տեսչական մարմինն ուսումնասիրել էր իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 432 (144-ը թեժ գծով) բողոք: 2022 թվականի ընթացքում հանրությունից ստացված բողոքներից 180-ը հիմնավոր էին (բողոքների 41,7%), 166-ն (հիմնավոր բողոքների 92%) արդեն իսկ լուծում էին ստացել:

2021 թվականին Տեսչական մարմինը ուսումնասիրել էր իրեն հասցեագրված քաղաքաշինական բնագավառին առնչվող ընդհանուր առմամբ 502 (որոնցից 120-ը թեժ գծով) բողոք: Հանրությունից ստացված բողոքներից հիմնավոր էին 296-ը (ընդհանուր քանակի 59%), որոնցից 172-ը (հիմնավոր բողոքների 58,1%) լուծում էին ստացել նշված ժամանակահատվածում:

2021-2023 թվականների ընթացքում հանրությունից ստացված բողոքների ընդհանուր քանակի, հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 181 գրություն, որից 162-ը (89,5%) արդեն իսկ լուծում են ստացել, 19-ը գտնվում են ընթացքի մեջ:

2022 թվականին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 323 գրություն, որից 290-ը (89.7%) նույն ժամանակահատվածում լուծում էր ստացել, 33-ը գտնվում էր ընթացքի մեջ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 20 գրության հիման վրա իրականացվել էին ստուգումներ:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ և ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմնին հանրությունից հասցեարգել է 9 բողոք, որոնք վերաբերում են հողի պահպանման և հողօգտագործման բնագավառին: Հիմնավոր 9 բողոքը լուծում է ստացել: Թեժ գծով բողոք չի ստացվել:

2022 թվականին Տեսչական մարմնին հանրությունից հասցեարգել էր 4 բողոք, որից հիմնավոր միակ բողոքը լուծում էր ստացել: Թեժ գծով բողոք չի ներկայացվել:

2021 թվականի ընթացքում հանրությունից ստացված 19 բողոքներից 8-ը (42,1%) հիմնավոր էին, 2-ը (10,52%)՝ ոչ: Հիմնավոր բողոքներից 5-ը լուծում էին ստացել (62,5%) տարվա ընթացքում, 10-ն ընթացքի մեջ էին: Թեժ գծով բողոք չէր ստացվել: Հանրությունից ստացված բողոքների հիման վրա իրականացվել էր 3 ստուգում:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 5 գրություն, լուծում են ստացել 15

գրությամբ բարձրացված խնդիրները: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրությունների հիման վրա իրականացվել է 9 ստուգում, որից 3-ը՝ Երևանում, 2-ն՝ Արարատում, մեկական՝ Շիրակի, Արագածոտնի, Սյունիքի և Արմավիրի մարզերում:

2022 թվականին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 20 գրություն, բոլորը լուծում են ստացել: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 14 գրության հիման վրա իրականացվել էին ստուգումներ:

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում կայացվել է ընդհանուր առմամբ 7405 որոշում: Կայացվել է 244 որոշում՝ օբյեկտի շահագործման դադարեցման վերաբերյալ: Նշանակվել է ընդհանուր առմամբ 1.968.470.000 դրամի չափով վարչական տուգանք, ինչը 4,2 անգամ ավելի է, քան նախորդ տարվա ընթացքում նշանակվածը: 2023 թվականի ընթացքում գանձվել է 313.092.703 դրամ, ինչը 2,4 անգամ ավելի է, քան նախորդ տարվա ընթացքում գանձվածը:



2022 թվականի ընթացքում կազմվել էր վարչական իրավախախտման վերաբերյալ 4443 արձանագրություն: Կայացվել էր 20 վարչական վարույթը կարճելու վերաբերյալ որոշում, 2760 վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշում, արձակվել էին կարգադրագրեր՝ 235 արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման դադարեցման վերաբերյալ: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 466.414.000 դրամի չափով վարչական տուգանք: 2022 թվականի ընթացքում գանձվել էր 131. 229. 602 դրամ:

2021 թվականի ընթացքում կայացվել էր 1373 որոշում վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, որով սահմանվել էր ընդհանուր առմամբ 126.130.000 ՀՀ դրամ տուգանք: 2021 թվականի ընթացքում պետական բյուջե գանձվել էր 83.129.481 ՀՀ դրամ, որից 41.070.000 ՀՀ դրամ 2021 թվականին նշանակված տույժերի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 796 արձանագրություն, կայացվել է 1512 որոշում: Նշանակվել է ընդհանուր առմամբ 725.900.000 դրամի չափով տուգանք: Միաժամանակ կայացվել է 244 որոշում՝ օբյեկտի շահագործման դադարեցման վերաբերյալ, որից 138-ը՝ ԲԼԿ, ԱԳԼՃԿ և ՀԳԼԿ: Արդյունքում կապարակնքվել է 47, ապամոնտաժվել՝ 35 լցավորման կայան: Դատարանի որոշմամբ կասեցվել է Տեսչական մարմնի 32 վարչական ակտի կատարում:

2022 թվականին կազմվել էր վարչական իրավախախտման վերաբերյալ 620 արձանագրություն, կայացվել էր 606 վարչական որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին, 7 կարճման որոշում: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 122.829.000 դրամի չափով վարչական տուգանք: Արձակվել էին կարգադրագրեր՝ 235 արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման դադարեցման վերաբերյալ:

2021 թվականին կայացվել էր 376 որոշում վարչական տույժ նշանակելու մասին: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 45.280.000 ՀՀ դրամ տուգանք:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նշանակված գումարի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Արձանագրված խախտումները վերաբերում են ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում, հասարակական վայրերում, պահեստային շենքերում, հանրակացարաններում, ինչպես նաև համապատասխան օբյեկտներ նախագծելիս և կառուցելիս հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու, կամ հակահրդեհային գույքի, սարքավորումների, հրդեհները հայտնաբերելու և հանգցնելու ավտոմատ միջոցների օգտագործման ու պահպանության կանոնները խախտելու դեպքերին, ինչպես նաև արտադրական վտանգավոր օբյեկտները տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությանը համապատասխան՝ ռեեստրում գրանցման չներկայացնելուն և տեխնիկական անվտանգության

փորձաքննություն չիրականացնելուն, ինչպես նաև Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերի պահանջները չկատարելուն:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կայացվել է 85 որոշում, նշանակվել է ընդհանուր առմամբ 4.605.000 ՀՀ դրամ տուգանք: Արձանագրված խախտումները վերաբերում են նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքները գործող ցանցերին առանց Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված պետական մարմնի գործարկման եզրակացության միացնելուն, ինչպես նաև՝ Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրի պահանջները չկատարելուն:

2022 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել էր 111 արձանագրություն, որոնցով հաշվետու ժամանակահատվածում կայացվել էր 38 որոշում վարչական տույժ նշանակելու մասին: Նշանակվել է ընդհանուր առմամբ 19.750.000 ՀՀ դրամ տուգանք:

2021 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել էր 27 ստուգման ակտ և 13 արձանագրություն, որոնցով կայացվել էր 36 որոշում վարչական տույժ նշանակելու մասին և 3 որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 1.900.000 ՀՀ դրամ տուգանք:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում նշանակված գումարի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում տրանսպորտային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է **4713** արձանագրություն, ինչը **1,6** անգամ ավելի է, քան նախորդ տարվա արձանագրությունների քանակը:



Կազմված արձանագրությունների **79%**-ը □**3687** հատ□ վերաբերում է բեռնափոխադրումների ոլորտում բացահայտված խախտումներին, մնացածն՝ ըստ

պատկերի

Հաշվետու տարվա ընթացքում կայացվել է 5129 որոշում, նշանակվել է ընդհանուր առմամբ 1.184.265.000 ՀՀ դրամ տուգանք:



2022 թվականի ընթացքում կազմվել է 2946 արձանագրություն, որոնցից 1470-ով կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշում, 11-ով կայացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշում, մնացածը գտնվում են քննության փուլում: 2022 թվականին նշանակվել է ընդհանուր առմամբ 267.085.000 ՀՀ դրամ տուգանք:

2021 թվականի ընթացքում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 636 արձանագրություն, որից 503-ով կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշում, 7-ով կայացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշում: 2021 թվականին նշանակվել է ընդհանուր առմամբ 18.940.000 ՀՀ դրամ տուգանք:

Տրանսպորտի բնագավառում նշանակված գումարի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերում են ծանրաքաշ կամ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների կշռման ընթացքում հայտնաբերված

խախտումներին, որոնք մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքի կամ ընդհանուր քաշի գերազանցումով խախտումներ են:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 293 արձանագրություն, կայացվել է 666 որոշում: Նշանակվել է ընդհանուր առմամբ 51.950.000 ՀՀ դրամ տուգանք:

2022 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել էր 740 արձանագրություն, կայացվել էր վարչական իրավախախտման վերաբերյալ 638 որոշում: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 50.450.000 ՀՀ դրամ տուգանք:

2021 թվականի նույն ժամանակահատվածում կազմվել էր վարչական իրավախախտման վերաբերյալ 420 որոշում: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 49.810.000 ՀՀ դրամ տուգանք:

Քաղաքաշինության բնագավառում նշանակված գումարի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Արձանագրված խախտումները մեծամասամբ վերաբերում են ճարտարապետահատակագծային առաջադրանքին չհամապատասխանող նախագծերը համաձայնեցնելուն, սահմանված կարգի խախտումներով ճարտարապետահատակագծային առաջադրանքներ տրամադրելուն, կառուցապատողի կողմից առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելուն, օրենքով սահմանված դեպքերում

կառուցապատողի կողմից հեղինակային կամ տեխնիկական հսկողության իրականացում չապահովելուն:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում կազմվել է 19 արձանագրություն՝ բացահայտված խախտումների վերաբերյալ, կայացվել էր 13 որոշում, նշանակված գումարը կազմում է 1.750.000 ՀՀ դրամ:

2022 թվականի ընթացքում կայացվել էր 8 որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին: Որոշումների հիման վրա նշանակված գումարը կազմում էր 6.300.000 ՀՀ դրամ:

2021 թվականի ընթացքում Տարեկան ծրագրին համապատասխան իրականացված ստուգումների արդյունքում կայացվել էր 38 որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին: Որոշումների հիման վրա նշանակված գումարը կազմում էր 10.200.000 ՀՀ դրամ, որով 8.000.000-ը Տարեկան ծրագրով իրականացված ստուգումների հիման վրա, իսկ 2.200.000-ն՝ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումներով:

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ

2023 թվականին Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերի դեմ բերվել է ընդհանուր առմամբ 119 վերադաս բողոք:

2022 թվականին Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերի դեմ բերվել էր ընդհանուր առմամբ 94, իսկ 2021 թվականի՝ 62 վերադաս բողոք: Ըստ տարիների համեմատական պատկերը հետևյալն է.



Ըստ բնագավառների 2023 թվականին ներկայացված բողոքների քանակն ունի հետևյալ գրաֆիկական բաշխվածությունը.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել է 38 վարչական ակտ, ևս 12-ը փոխանցվել է 2022 թվականից: Հաշվետու ժամանակահատվածում 35 (70%) բողոք մերժվել է, և բողոքարկվող որոշումները թողնվել են անփոփոխ, 4 (8%) բողոք բավարարվել է, և կայացվել են վարչական վարույթը կարճելու մասին նոր որոշումներ, 2 (4%) բողոք բավարարվել է մասնակի: 9 բողոք ուսումնասիրման փուլում են: Բողոքները եղել են արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցման ռեեստրում գրանցելու, տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման, արտադրական վտանգավոր օբյեկտի կամ դրանում առկա տեխնիկական միջոցի, տեխնոլոգիական սարքավորման շահագործումը դադարեցնելու պահանջների դեմ:

2022 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել էր 20 վարչական ակտ, որից 15-ով (75%) որոշում է կայացվել կայացված վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին, իսկ 5-ով՝ որոշում՝ կայացված որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին: 2021 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել էր 14 վարչական ակտ, որից 10-ով որոշում էր կայացվել կայացված վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին, իսկ 3-ով՝ որոշում՝ կայացված որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին:



ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել է 2 վարչական ակտ, ևս 1-ը փոխանցվել է 2022 թվականից: Բողոքները վերաբերվել են վարչական ակտերի իրավաչափությանը և դրանց կայացման ժամկետներին: Քննության արդյունքում վարչական ակտերը թողնվել են անփոփոխ:

2022 թվականին ներկայացվել էին 2 վարչական բողոք, որոնց քննության արդյունքում վարչական ակտերը թողնվել էին անփոփոխ: 2021 թվականի ընթացքում վերադաս բողոքներ չէին ներկայացվել:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել է 79 վարչական ակտ, ևս 13-ը փոխանցվել է 2022 թվականից: Հաշվետու ժամանակահատվածում 53-ով (57%) կայացվել է որոշում կայացված վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին, 3-ով (3%)՝ որոշում կայացված որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին, 1 (1%) բողոք բավարարվել է մասնակի: 35 բողոք ուսումնասիրման փուլում են: Բողոքները վերաբերվել են Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների կողմից փոխադրումներին ներկայացվող պահանջները չկատարելու պահանջին:

2022 թվականին վերադասության կարգով բողոքարկվել էր 70 վարչական ակտ, որից 64-ով (91,4%) որոշում էր կայացվել բողոքն առանց բավարարման և որոշումն անփոփոխ թողնելու մասին, 6-ով որոշում էր կայացվել որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին: 2021 թվականին վերադասության կարգով բողոքարկվել էր 46 վարչական ակտ, որից 40-ով որոշում էր կայացվել բողոքն առանց բավարարման և որոշումն անփոփոխ թողնելու մասին, 5-ով որոշում էր կայացվել որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին, 1-ը՝ ընթացիկ:



ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականին քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոք չի ներկայացվել:

2022 թվականին քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել էր 2 վարչական ակտ, որոնցով որոշում է կայացվել բողոքն առանց բավարարման և որոշումն անփոփոխ թողնելու մասին: 2021 թվականին վերադասության կարգով բողոքարկվել էր 2 վարչական ակտ, որոնցից 1-ով որոշում էր կայացվել բողոքն առանց բավարարման և որոշումն անփոփոխ թողնելու մասին:

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

2023 թվականի ընթացքում դատարան մուտքագրված 742 հայցադիմումից վարույթ է ընդունվել 663-ը, 37 հայցի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են: Հայցադիմումները մեծամասամբ վերաբերում են Տեսչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերի (որոշում, կարգադրագիր, ցուցում) վիճարկմանը:

2022 թվականի ընթացքում դատարան մուտքագրված 143 հայցադիմումից վարույթ էին ընդունվել 86-ը, 8-ի ընդունումը մերժվել էր, մյուսներն ընդունման փուլում էին: 2021 թվականին Տեսչական մարմնի դեմ ներկայացվել էր 76 հայցադիմում: Ըստ բնագավառների դատարան մուտք արած հայցադիմումներն ունեն հետևյալ գրաֆիկական բաշխվածությունն ըստ տարիների.



Հաշվետու ժամանակահատվածում կայացվել է 379 դատական վճիռ, որոնցից 349-ով հայցապահանջ բավարարվել է □ինչը կազմում է վճիռների 92%□, 30-ը՝ մերժվել: Բավարարված հայցապահանջներով 21 վճիռների դեմ Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք:

2022 թվականի ընթացքում կայացվել էր 51 դատական վճիռ, որոնցից 45 հայցապահանջ բավարարվել էր, 6-ը՝ մերժվել: Կայացված դատական վճիռների դեմ Տեսչական մարմնի կողմից բողոքարկվել էր 7 վճիռ, որոնք մերժվել էին (1 վերաքննիչ բողոքի ընդունումն էր մերժվել, իսկ 6 բողոքները մերժվել էին անհիմն լինելու պատճառաբանությամբ): Հայցի ընդունումը մերժելու դեմ նախկինում կայացված դատարանի որոշումների դեմ տնտեսավարողի ներակայացրած 2 վերաքննիչ բողոքներից 2-ն էլ բավարարվել էին: Հայցապահանջը մերժելու դեմ տնտեսավարողի ներակայացրած 2 վերաքննիչ բողոքներից 2-ն էլ քննության փուլում էին:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան է ներկայացվել 160 հայցադիմում, վարույթ է ընդունվել 135, 4-ի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են: Կայացվել է 65 վճիռ, որոնցով Տեսչական մարմնի դեմ 56 հայցապահանջները բավարարվել են, իսկ 9-ով՝ մերժվել:

2022 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 41 հայցադիմումից վարույթ է ընդունվել 32-ը, 2-ի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են: Կայացվել է 21 վճիռ, որոնցով Տեսչական մարմնի դեմ 17 հայցապահանջները բավարարվել են, իսկ 4-ը՝ մերժվել: Տեսչական մարմնի կողմից ներկայացված 3 վերաքննիչ բողոքները մերժվել են: Տնտեսավարողի ներկայացրած 3 վերաքննիչ բողոքները քննության փուլում են: Հայցի ընդունումը մերժելու դեմ տնտեսավարողի կողմից բերված 1 վերաքննիչ բողոքը բավարարվել է:

2021 թվականին նշված բնագավառում ներկայացվել էր 42 հայցադիմում, Տեսչական մարմնի դեմ կայացվել էր 16 վճիռ, Տեսչական մարմնի օգտին՝ 8 վճիռ, 2-ով դատական գործի վարույթը կարճվել էր: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել էր 6 վերաքննիչ բողոք, տնտեսավարող սուբյեկտների կողմից՝ 6 վերաքննիչ բողոք: 2020 թվականին ներկայացվել էր 24 հայցադիմում, որոնցից 4-ով վճիռ էր կայացվել Տեսչական մարմնի դեմ, Տեսչական մարմնի կողմ՝ 5 վճիռ, վերաքննիչ դատարան բողոքարկվել էր 1 դատական ակտ:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան է ներկայացվել 9 հայցադիմում, վարույթ է ընդունվել 8-ը, մյուսներն ընդունման փուլում են: Կայացվել է 7 վճիռ, որոնցով Տեսչական մարմնի դեմ 4 հայցապահանջները բավարարվել են, իսկ 3-ով՝ մերժվել:

2022 թվականին նշված բնագավառին առնչվող հարցերով դատարան հայցադիմում չի ներկայացվել: 2021 թվականի ընթացքում ներկայացվել էր 1 հայցադիմում:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան է ներկայացվել 558 հայցադիմում, վարույթ է ընդունվել 504, 33-ի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են: Կայացվել է 293 դատական վճիռ, որոնցից 277 հայցապահանջ բավարարվել է, 16-ը՝ մերժվել:

2022 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 75 հայցադիմումից վարույթ է ընդունվել 53-ը, 3-ի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են: Կայացվել է 19 դատական վճիռ, որոնցից 17 հայցապահանջ բավարարվել է, 2-ը՝ մերժվել: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 4 վերաքննիչ բողոք, որոնք մերժվել են՝ 3-ն անհիմն լինելու պատճառաբանությամբ, իսկ մեկ բողոքի վարույթի ընդունումն է մերժվել: Հայցի ընդունումը մերժելու դեմ տնտեսավարողի կողմից բերված 1 վերաքննիչ բողոքը բավարարվել է:

2021 թվականին ներկայացվել էր 22 հայցադիմում: 13 դատական գործով վճիռ էր կայացվել Տեսչական մարմնի դեմ, 2 հայցադիմումով որոշում էր կայացվել հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու մասին, 1-ով՝ հայցադիմումը վերադարձնելու մասին: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել էր 4 վերաքննիչ բողոք, քաղաքացու կողմից՝ 1 վերաքննիչ բողոք:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականին ընդդեմ Տեսչական մարմնի դատարան է ներկայացվել 14 հայցադիմում, վարույթ է ընդունվել 15: Կայացվել է 13 դատական վճիռ, որոնցից 13 հայցապահանջ բավարարվել է, 2-ը՝ մերժվել:

2022 թվականին ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 19 հայցադիմումից վարույթ է ընդունվել 10-ը, մյուսներն ընդունման փուլում են: Կայացված 3 վճիռներով տնտեսավարողի հայցապահանջները բավարարվել են:

2021 թվականին ներկայացվել էր 3 հայցադիմում: 6 դատական գործով վճիռ էր կայացվել Տեսչական մարմնի դեմ, 1 դատական գործի վարույթ կարճվել է:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականին ընդդեմ Տեսչական մարմնի դատարան է ներկայացվել 1 հայցադիմում, կայացվել է 1 որոշում տնտեսավարողի հայցապահանջները բավարարվելու վերաբերյալ:

2022 թվականին ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 8 հայցադիմումներից 1-ը ընդունվել է վարույթ, 1-ի՝ ընդունումը մերժվել է: Կայացված 8 վճիռներով տնտեսավարողի հայցապահանջները բավարարվել են:

2021 թվականին դատարան ներկայացվել էր 8 հայցադիմում: Տեսչական մարմնի դեմ կայացված վճիռներ չեն եղել, Տեսչական մարմնի օգտին կայացվել էր 4 վճիռ, 1 դատական գործով որոշում էր կայացվել գործի վարույթը կարճելու մասին, 1 հայցադիմումով որոշում էր կայացվել վարույթ ընդունելը մերժելու մասին:

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու տարվա ընթացքում Տեսչական մարմնի կողմից տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ են ներկայացվել առաջարկություններ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված հետևյալ իրավական ակտերում՝

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում,
- ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի □Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին□ թիվ 1025-Ն որոշման մեջ.
- ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ:

Միաժամանակ տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ են ներկայացվել առաջարկներ հետևյալ խնդիրների կարգավորման նպատակով.

1. □Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին□ օրենքի համաձայն ստուգումները տնտեսավարողների մոտ պետք է իրականացվեն ստուգումների տարեկան ծրագրով, որը սահմանված կարգով հաստատվելուց հետո հրապարակվում է ստուգումներ իրականացնող մարմնի պաշտոնական կայքում՝ մինչև ստուգումներին նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը (հոդված 2.1): Գործնականում բազմաթիվ են այն դեպքերը, երբ ստուգման ենթակա (տարեկան ծրագրով նախատեսված) սուբյեկտի պաշտոնատար անձը, նախապես՝ Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջից տեղեկանալով ստուգման տարեկան ծրագրում ընդգրկված լինելու մասին կատարում է տնտեսավարող սուբյեկտի՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ, կազմակերպաիրավական և/կամ անվանման փոփոխություն, որի արդյունքում ոլորտային նույն ռիսկայնության աստիճան

ունեցող տնտեսավարող արդեն նոր «սուբյեկտը» ստուգումների տվյալ տարվա ծրագրում չներառված է դառնում: Մեկ այլ դեպքում, ստուգման ենթակա սուբյեկտը քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա գործունեությունն իրականացնում է այլ անձին սեփականության կամ այլ իրավունքով պատկանող հասցե ունեցող օբյեկտում: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 595-Ն հրամանով հաստատված Հրդեհային անվտանգության կանոնների 6-րդ կետի պահանջի՝ «վարձակալված շենքերում տեղավորված օբյեկտներում հրդեհային անվտանգության ապահովումը կարգավորվում է վարձակալության պայմանագրով: Պայմանագրում նշված տեղեկությունների բացակայության դեպքում պատասխանատվությունը կրում է վարձատուն»: Պրակտիկայում հիմնականում հանդիպում են օբյեկտների շահագործման քաղաքացիաիրավական պայմանագրեր, որտեղ բացակայում է հրդեհային անվտանգության ապահովման պատասխանատու անձի ուղղակի նշումը: Այս փաստը հնարավորություն է տալիս օբյեկտը փաստացի շահագործողին «խուսափել» անվտանգության ապահովման օրենսդրական պահանջների կատարումից: Անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ իրավական պատշաճ ապահովումներ իրականացնել պայմանագրի մյուս կողմին հայտնաբերելու, ստուգման մասին նրան ծանուցելու, ստուգման ընթացքում նրա ներկայությունն ապահովելու համար: □Հրդեհային անվտանգության մասին□ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Տեսչական մարմինը պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից հրդեհային անվտանգության ոլորտին առնչվող նորմատիվ իրավական ակտերի և փաստաթղթերի (այդ թվում՝ նորմատիվատեխնիկական) պահանջների կատարման նկատմամբ պետական հրդեհային հսկողություն և վերահսկողություն իրականացնելիս լիազորված է հրդեհային անվտանգության ոլորտին առնչվող նորմատիվ իրավական ակտերի և փաստաթղթերի (այդ թվում՝ նորմատիվատեխնիկական) պահանջների կատարման և խախտումների կանխարգելման ուղղությամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու նպատակով անցկացնելու տարածքների, շենքերի, կառույցների, շինությունների և այլ *օբյեկտների* հետազոտություններ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստուգումներ□: Այսինքն՝ ոլորտը կարգավորող օրենքը ստուգումները նախատեսում է

իրականացնել օբյեկտներում, ոչ թե սուբյեկտների մոտ: Հրդեհատեխնիկական անվտանգության պահանջների ոլորտային օրենսդրության կարգավորման առարկան օբյեկտն է, որում տնտեսավարողը գործունեություն է իրականացնում՝ գնահատելով և կարևորելով այդ օբյեկտի ռիսկը հնարավոր վնասի առաջացման դեպքում: Իրավաբանական ձևակերպումների ձևի պահանջի պահպանումն իրականում առաջ է մղվում՝ հետ մղելով օբյեկտի անվտանգության ստուգման առավել կարևոր նյութական պահանջը:

2. Համաձայն «Հրդեհային անվտանգության մասին» օրենքի 10-րդ հոդվածի □Հրդեհների և դրանց հետևանքների պետական միասնական հաշվառումը կատարում է տեսչական մարմինը՝ այդ ոլորտում լիազորված մարմնի հետ համաձայնեցված: Հրդեհների և դրանց հետևանքների պետական միասնական հաշվառման կանոնները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը□: Սակայն հրդեհի մասին ակտի կազմումը, ինչպես նաև հրդեհների և դրանց հետևանքների հաշվառումը չի կարող իրականացվել այն մարմնի կողմից □այս պահին՝ Տեսչական մարմին□, որը չի տիրապետում պահանջվող տեղեկատվությանը: Ավելին, ներկայումս հրդեհների և դրանց հետևանքների պետական հաշվառումն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր Արտակարգ իրավիճակների վարչության պետի 2003 թվականի հոկտեմբերի 31-ի «Հրդեհների և դրանց հետևանքների պետական հաշվառման կանոնները հաստատելու մասին» N 978-Ն հրամանի, այլ ոչ թե՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կանոնների համաձայն, ինչը օրենքի պահանջի խախտում է: Միաժամանակ Տեսչական մարմնի կողմից մշակվել և Գրասենյակ է ներկայացվել «Հրդեհների և դրանց հետևանքների պետական հաշվառման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը:

3. Հրդեհային հսկողությունը անտառներում, ստորգետնյա հանքերում, երկաթուղային և օդային տրանսպորտում մշտապես իրականացվել է համապատասխան գերատեսչության կողմից: Ընդ որում՝ ոչ միայն տեսչական մարմնի սահմանափակ ռեսուրսի, այլև՝ նշված բնագավառներում առկա բազմաթիվ առանձնահատկությունների պատճառով: Սակայն «Հրդեհային անվտանգության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքում (ՀՕ-165-Ն) 20-րդ հոդվածը վերաշարադրվել է նոր խմբագրությամբ:

Արդյունքում՝ անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների հետ մեկտեղ, հոդվածից դուրս է մնացել այն դրույթը, համաձայն որի՝ անտառներում, ստորգետնյա հանքերում, երկաթուղային և օդային տրանսպորտում հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն պետք է իրականացվի համապատասխան նախարարության (գերատեսչության) կողմից:

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՁԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2023 թվականին Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակվել է 66 հաղորդագրություն, որից ընդհանուր գործունեությանը վերաբերող աշխատանքային հանդիպում-քննարկումների, այցերի, ժողովների վերաբերյալ՝ 20 հաղորդագրություն: Ըստ բնագավառների հրապարակված հաղորդագրությունների քանակն ունի հետյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարի տեղակալները կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները հարցազրույցներ են տվել, պարզաբանումներ ներկայացրել հեռուստաընկերությունների, ռադիոկայանների, էլեկտրոնային լրատվամիջոցների՝ ընդհանուր առմամբ 137 հրապարակում: Դրանցից 15-ը վերաբերել է քաղաքաշինության, 113-ը՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության, 9-ը՝ տրանսպորտային անվտանգության բնագավառներին: Տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանը 2023թ. հունվարի 3-ին ծավալուն հարցազրույց է տվել Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» ծրագրին: Նա խոսել է Տեսչական մարմնի վերահսկողության ներքո գտնվող ոլորտներում 2022 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական աշխատանքների ու արձանագրված արդյունքների մասին:

https://www.youtube.com/watch?v=CqP4pyFjWoo
https://www.facebook.com/utfsib/videos/3009016652732951

2023թ. փետրվարի 8-ին «ԱՐՄԵՆՊՐԵՍ» լրատվական գործակալության սրահում ասուլիսով հանդես են եկել Տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանը և Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ, տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլոտը համակարգող Արազ Պապիկյանը: Բանախոսներն ամփոփել են կատարված վերահսկողության արդյունքները:

https://www.youtube.com/watch?v=ksF1yYCjjXU
https://www.facebook.com/armenpress/videos/1347117896113766

Լրատվամիջոցներից, անհատ լրագրողներից, ՀԿ-երից, այլ կառույցներից ստացվել է թվով 59 գրավոր հարցում, որից 19-ը վերաբերել է հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառին, 1-ը՝ տրանսպորտի անվտանգության բնագավառին, 5-ը՝ քաղաքաշնության բնագավառին, 34-ը եղել են Տեսչական մարմնի գործունեությանը վերաբերող ընհանուր բնույթի հարցումներ, որոնց բոլորին տրվել են պատասխաններ:

Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված էր 2023 թվականի ընթացքում կազմակերպել 13 հանդիպում Երևանում և բոլոր մարզերում: Փաստացի կազմակերպվել է 11 հանդիպում, որից 9-ը՝ Երևանում, 1-ական՝ Տավուշի և Կոտայքի մարզերում:

2022 թվականին Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակվել է 89 հաղորդագրություն, որից ընդհանուր գործունեությանը վերաբերող աշխատանքային հանդիպում-քննարկումների, այցերի, ժողովների վերաբերյալ հաշվետու կիսամյակում ՏՄ պաշտոնական կայքէջում տեղադրվել է 16 հաղորդագրություն, որոնք հրապարակվել են նաև տպագիր մամուլով: Տեսչական մարմնի կողմից նկարահանվել էր 4 ընդհանուր իրազեկող բնույթի տեսահոլովակ: Տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարի տեղակալը, կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները հարցազրույցներ, պարզաբանումներ են տվել տպագիր, առցանց լրատվամիջոցներին, նաև հեռուստաընկերություններին, ռադիոընկերություններին ընդհանուր թվով 138 հարցազրույց: Տպագիր և առցանց ԶԼՄ-երին տրվել է 60 հարցազրույց (նախորդ տարվա 21-ի փոխարեն): Կազմակերպվել և իրականացվել է 78 հեռուստառեպորտաժ: Կազմակերպվել է 13 ռադիոելույթ (նախորդ տարվա 7-ի փոխարեն)՝ Տեսչական մարմնի ղեկավարի, տեղակալների, ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ:
2022 թվականին տեղի է ունեցել 20 աշխատանքային հանդիպում՝ պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, տնտեսավարող սուբյեկտների հետ, որից 7-ը՝ արտագնա: Լրատվամիջոցներից, անհատ լրագրողներից, ՀԿ-երից, այլ կառույցներից ստացվել է թվով 51 գրավոր հարցում, որոնց տրվել են պատասխաններ: Լրատվամիջոցի հրապարակման հիման վրա տրվել է 3 պաշտոնական պարզաբանում և հայտարարություն: Տնտեսավարողներին ուղարկվել են իրազեկող բնույթի ընդհանուր թվով 113 ծանուցում:
2022 թվականին իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 2220 լրատվական հրապարակում՝ նախորդ տարվա 1579-ի փոխարեն:

Դրանցից 1057-ը □ընդհանուր քանակի 47.6%□ վերաբերում են տրանսպորտի, 394-ը □ընդհանուր քանակի 17.7%□՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության, 387-ը □ընդհանուր քանակի 17.4%)՝ քաղաքաշինության, 102-ը □ընդհանուր քանակի 4.6%□՝ հողօգտագործման, 97-ը □ընդհանուր քանակի 4.4%□՝ էներգետիկայի բնագավառներին և 183-ը □ընդհանուր քանակի 8.2%□՝ ընդհանուր բնույթի: Կատարվել են կառավարման խորհրդի, ինչպես նաև մասնագիտական քննության հանձնաժողովի նիստերի վերաբերյալ տեղեկատվական նյութերի տեղադրում utfsib.am կայքում:

Ստորև ներկայացվում է 2023 թվականին իրականացված խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներն ըստ բնագավառների:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 45 հեռուստառադիոելույթ, տպագրվել է 113 հոդված, իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 608 լրատվական հրապարակում:

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է 32 հոդված: Ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ Գործունեության տարեկան ծրագրով նախատեսված իրազեկող 16 հրապարակումների փոխարեն փաստացի պատրաստվել և հրապարակվել է 29-ը: Հրապարակումները վերաբերել են խոշոր առևտրի կենտրոնների, գազա-բենզալցակայանների գործունեության դարադերցմանը, դրանց գործունեության վերսկսմանը: Մասնավորապես՝ «Վաղարշ և Որդիներ կոնցեռն», «ՌԱՖԱՅԵԼ-ՏԱԹԵՎ» ՍՊԸ գործունեությունը», «Անուշ» տրիկոտաժի արտադրական միավորում ՍՊ, «Շինթրեյդ», «Եռանկյունի առկենտ» ՍՊԸ «Տաշիր ինվեստ գրուպ» ՓԲ, «Ապսիդա» և «Եղվարդի համակցված կերերի գործարան» ՍՊ, Երևանի պահածոների գործարան□ («Սուրմալու» տոնավաճառ) ՓԲ ընկերությունների և մի շարք գազա-բենզալցակայանների գործունեության դադարեցմանը, հետագայում նաև կարդադրագրի պահանջների մասնակի կատարման հիմքով դրանց աշխատանքների վերսկսմանը:

2023 թվականի ընթացքում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ տեսքստային հաղորդագրությունները բաժանորդների շրջանում տարածելու համար գրություններ են ուղարկվել հեռահահաղորդակցության ոլորտում ծառայություն մատուցող ընկերություններին (Թիմ Տելեկոմ, Յուքոմ, Վիվասել ՄՏՍ):

2023 թվականի 3-րդ եռամսյակում ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության հետ համատեղ պատրաստվել և հրապարակվել է իրազեկող բնույթի 1 հոլովակ՝ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ

https://www.facebook.com/utfsib/videos/3517114825170198

2022 թվականի ընթացքում կազմակերպվել էր 35 հեռուստառադիոելույթ, տպագրվել էր 49 հոդված, ՏՄ պաշտոնական կայքում տեղադրվել էր 16 հոդված և տրամադրվել էր 251 իրազեկող բնույթի գրություն, իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 394 լրատվական հրապարակում:

2021 թվականին կազմակերպվել էր խորհրդատվական և իրազեկող բնույթի 148 հանդիպում, 4 հեռուստառադիոելույթ, հարցազրույց՝ 3 տպագիր հոդված, ՏՄ պաշտոնական կայքում տեղադրվել էր 15 հոդված: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել էր ոլորտի վերաբերյալ 77 լրատվական հրապարակում: Պատրաստվել էր ոլորտային իրազեկող 2 տեսահոլովակ:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 4 լրատվական հրապարակում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է 2 հոդված.

- ✓ «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից 2023 թվականի 1-ին եռամսյակում էներգետիկայի և էներգասպառման բնագավառում իրականացված դիտարկումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն»

  https://utfsib.am/post/more/562
  https://www.facebook.com/photo?fbid=557740066535138&set=a.186856583623490

- ✓ «2023թ. 1-ին կիսամյակում էներգետիկայի և էներգասպառման բնագավառում իրականացված տեսչական վերահսկողության ամփոփ վիճակագրություն»

  https://utfsib.am/post/more/586
  https://www.facebook.com/photo?fbid=591824453126699&set=a.186856583623490

2022 թվականի ընթացքում ՏՄ պաշտոնական կայքում տեղադրվել էր 6 հոդված, իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել էր 97 լրատվական հրապարակում, իրազեկման նպատակով կազմակերպվել էր 172 հանդիպում:

2021 թվականին իրազեկելու նպատակով կազմակերպվել էր 199 հանդիպում, Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել էր 12 հաղորդագրություն: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել էր ոլորտի վերաբերյալ 17 լրատվական հրապարակում: Ոլորտի վերաբերյալ կազմակերպվել էր 1 հեռուսատելույթ:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում 2023 թվականի ընթացքում տեղադրվել է 9 հոդված: Իրականացվել է խորհրդատվական և իրազեկող բնույթի 4 ելույթ տարբեր հեռուստա և ռադիո ալիքներով, կազմակերպվել 9 հարցազրույց տպագիր և առցանց լրատվամիջոցներով: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 159 լրատվական հրապարակում:

Ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ Գործունեության տարեկան ծրագրով նախատեսված իրազեկող 16 հրապարակումների փոխարեն փաստացի պատրաստվել և հրապարակվել է 11-ը: Պատրաստվել է իրազեկող բնույթի 3 հրապարակում: Մասնավորապես.

- ✓ իրազեկում՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կարգում կատարված փոփոխությունների վերաբերյալ *https://www.utfsib.am/post/more/524*
- ✓ իրազեկում՝ ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներով առավելագույն զանգվածը գերազանցող ծանրաքաշ մեքենաներով երթևեկելու տուգանքի չափի փոփոխության վերաբերյալ *https://www.utfsib.am/post/more/525*
- ✓ ի գիտություն միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող և ուղետոմսերի վաճառքով զբաղվող տնտեսավարողների- *https://www.utfsib.am/post/more/583*

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում 2022 թվականի ընթացքում տեղադրվել էր 28 հոդված: Իրականացվել էր խորհրդատվական և իրազեկող բնույթի 24 ելույթ տարբեր հեռուստա և ռադիո ալիքներով, կազմակերպվել 5 հարցազրույց տպագիր և առցանց լրատվամիջոցներով: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել էր ոլորտի վերաբերյալ 1057 լրատվական հրապարակում:

2021 թվականին կատարվել էր իրազեկող, նախազգուշացնող բնույթի 3 հրապարակում՝ միջմարզային և ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ընկերությունների կողմից փոխադրավարձի անհարկի բարձրացման, ուղևորներին, կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող տնտեսավարողներին և ֆիզիկական անձանց՝ հանրային տրանսպորտից օգտվելիս հակահամաճարակային կանոնների պահպանման, և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի և Ճանապարհային ոստիկանության հետ համատեղ վերահսկողական աշխատանքների

վերսկսկման վերաբերյալ: Զանգվածային լրատվության հասանելի միջոցներով իրականացվել էին իրարզեկող բնույթի աշխատանքներ, մասնավորապես՝ 128 հոդված Տեսչական մարմնի պաշտոնական կայքում, 13 տպագիր հարցազրույց ԶԼՄ-երին, 22 հեռուստաելույթ, 4 ուղիղ եթեր, 3 ռադիոելույթ: 2021 թվականին իրազեկման նպատակով կազմակերպվել էր 372 հանդիպում: Միաժամանակ ուղարկվել էին նաև 113 նախազգուշացնող բնույթի գրություններ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակվել է 2 հաղորդագրություն: Կազմակերպվել է 15 հարցազրույց՝ տպագիր և առցանց լրատվամիջոցներով, 7 հեռուստաելույթ և 1 ռադիոելույթ: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 173 լրատվական հրապարակում: Տրվել է 1 պաշտոնական պարզաբանում:

Ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ Գործունեության տարեկան ծրագրով նախատեսված իրազեկող 12 հրապարակումների փոխարեն փաստացի հրապարակվել է 2-ը.

- ✓ «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակում քաղաքաշինության բնագավառում կատարված աշխատանքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն»

  https://utfsib.am/post/more/558Շ
  https://www.facebook.com/photo?fbid=554562720186206&set=a.186856583623490

- ✓ «2023 թ. 1-ին կիսամյակում քաղաքաշինության բնագավառում իրականացված տեսչական վերահսկողության ամփոփ վիճակագրություն»

  http://utfsib.am/post/more/590
  https://www.facebook.com/photo/?fbid=593661916276286&set=a.186856583623490

Պատրաստվել և հրապարակվել է 1 իրազեկող բնույթի տեսանյութ.

- ✓ ԻՐԱԶԵԿՈՒՄ՝ բնակչության սակավաշարժուն խմբերի համար շինարարական նորմերի վերաբերյալ

  https://www.youtube.com/watch?v=g19NpbHLyhc

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել էր 17 հաղորդագրություն: Կազմակերպվել էր 6 հարցազրույց՝ տպագիր և առցանց լրատվամիջոցներով, 11 հեռուստաելույթ և 2 ռադիոելույթ: Պատրաստվել և նկարահանվել էր 1 իրազեկող բնույթի տեսահոլովակ՝ Ինքնակամ կառույցների հաշվառման նոր կարգի վերաբերյալ:

2021 թվականի ընթացքում իրազեկող բնույթի աշխատանքներ էին իրականացվել զանգվածային լրատվության միջոցներով, այն է՝ հեռարձակվել էր 9 հեռուստառեպորտաժ և 1 ռադիոելույթ: Տպագիր ԶԼՄ-ներին տրվել էր 2 հարցազրույց: ՏՄ պաշտոնական կայքում հրապարակվել էր 12 հոդված: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում ոլորտի վերաբերյալ արխիվավորվել էր 255 հրապարակում:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ և ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից 2023 թվականին կատարված ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ ըստ անհրաժեշտության ստուգումների հետ միաժամանակ, համայնքների ղեկավարներին և համապատասխան բաժինների պաշտոնատար անձանց տրվել են ոլորտի հետ կապված իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններ, ինչպես նաև օրենսդրական պահանջներին վերաբերվող խորհրդատվություններ: Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է 1 հաղորդագրություն.

- ✓ «2023 թ. 1-ին կիսամյակում գեոդեզիայի, քարտեզագրության, հողօգտագործման և հողի պահպանման բնագավառում իրականացված տեսչական վերահսկողության ամփոփ վիճակագրություն»

https://utfsib.am/post/more/588
https://www.facebook.com/photo?fbid=592239536418524&set=a.186856583623490

Միաժամանակ մշտադիտարկվել և արխիվավորվել է ոլորտին վերաբերող 15 լրատվական հրապարակում:

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել էր 6 հաղորդագրություն, կազմակերպվել 3 հեռուստաելույթ, մշտադիտարկվել ոլորտին վերաբերող 102 լրատվական հրապարակում:

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ □արտադրական վտանգավոր օբյեկտների դասակարգման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը□: Սակայն մինչ օրս արտադրական վտանգավոր օբյեկտները դասակարգված չեն, և վտանգավորության տարբեր աստիճանի օբյեկտների օրենքի խախտումով շահագործման դեպքում պատասխանատվության նույն միջոցի կիրառումն անհամաչափ վարչարարության ռիսկ է առաջացնում: Միաժամանակ ակնհայտ է, որ սառնարանի տեխնածին վթարի □այդ թվում՝ հրդեհի կամ պայթյունի□ վտանգը և հնարավոր հետևանքները համեմատելի չեն բենզալցակայանի կամ պայթյունավտանգ նյութերի պահեստի □անգամ՝ փոքր□ վթարի հետ:

2. Համակարգային խնդիր է հակահրդեհային միջտարածությունների ապահովման պահանջը, հատկապես՝ բենզալցակայանների, վառելիքի լցավորման կայանների դեպքում: Այն դեպքերում, երբ գործող ԱԳԼՃԿ-ում կամ հեղուկ վառելիքի լցավորման կայանում պահանջվող միջտարածությունը պահպանված չէ և չկա նաև հնարավորություն խնդիրը շտկելու (տարածքային առումով), անհրաժեշտ է մշակել լրացուցիչ միջոցներ, նախատեսել լրացուցիչ ինժեներատեխնիկական և ամրացման աշխատանքներով անվտանգության ապահովման լուծումներ, օրինակ՝ պատերը հաստացնել, բարձրացնել, հատուկ տեխնիկական սարքավորումներով հագեցնել:

3. Համաձայն «Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 16 փետրվարի 2006 թվականի թիվ 182-Ն որոշման հավելվածի 92-րդ կետի՝ 100 կգ սելիտրան համարվում է արտադրական վտանգավոր օբյեկտ, ուստի ենթակա է արտադրական վտանգավոր օբյեկտների □այսուհետ՝ ԱՎՕ□ ռեեստրում գրանցման, իսկ չգրանցելու դեպքում սահմանված է վարչական պատասխանատվություն՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով տուգանք, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն: Հրդեհային անվտանգության ոլորտը համակարգող ՌԴ նորմատիվի Федеральный закон от 21.07.1997 N 116-ФЗ (ред. от 11.06.2021) "О промышленной безопасности опасных производственных объектов" համաձայն՝ պարարտանյութ սելիտրան ԱՎՕ է համարվում 200 տոննա չափը գերազանցելու դեպքում:

4. ՀՀ վարչապետի 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ 952-Լ որոշմամբ Տեսչական մարմնի լիազորությունները համալրվել են ևս մեկ գործառույթով, այն է՝ տիեզերական գործունեության բնագավառում օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացմամբ, այդ թվում՝ նաև ստուգումների միջոցով, որը ենթադրում է ստուգաթերթերի և ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանության առկայություն:

5. ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 71-Ն որոշման 3-րդ հավելվածով մի շարք ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է սահմանվել Տեսչական մարմինը: Ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու համար անհրաժեշտ են հաստատված ստուգաթերթեր և ռիսկի հաշվարկի մեթոդաբանություն: Տվյալ գործառույթի կատարումը հնարավոր է ապահովել անձնակազմի վերապատրաստման և նոր հաստիքներով համալրման պարագայում:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. □Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին□ և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքների միջև առկա է անհամապատասխանություն, ինչն իրավական խոչընդոտ է ստեղծում պատշաճ ստուգումներ իրականացնելու գործընթացում. մասնավորապես՝ առաջին օրենքով նախատեսվում է ստուգումներ անցկացնել օբյեկտներում, իսկ երկրորդով՝ միայն սուբյեկտներում:

2. ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի «6 կՎ և բարձր լարման նոր կառուցվող և վերակառուցվող էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգի մասին» թիվ 739-Ն և «Միջին ու բարձր ճնշման գազի համակարգերի՝ նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգը հաստատելու մասին» 5 հոկտեմբերի 2006 թվականի թիվ 1423-Ն որոշումներով սահմանված որոշ գործառույթների իրականացման ժամանակ Տեսչական մարմինն առնչվում է քաղաքաշինության բնագավառին վերաբերող խնդրի, այն է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման

նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշման մեջ հստակ դասակարգված չեն էներգատեղակայանքներն ըստ ռիսկայնության կատեգորիաների և, հետևաբար, հնարավոր չի պարզել ինչպիսի փորձաքննության են ենթակա նախագծերը:

3. «Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննությունն իրականացնելու կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 17-ի թիվ 580-Ն որոշման մեջ առկա են որոշակի պահանջներ, որոնք տարընթերցման և տարաբնույթ մեկնաբանության տեղիք են տալիս, ինչը խոչընդոտում է պատահարների մասնագիտական քննություն իրականացնելու գործընթացը:

4. Վերականգնող էներգիայի, այդ թվում՝ արևային կայանների, աննախադեպ աճը կարևոր դեր է կատարում ՀՀ էներգետիկ անվտանգության բնագավառում, սակայն արդեն փաստացի տեղակայված կայանների հզորությունը որոշակի խնդիրներ է ստեղծում էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների կարգավորման ժամանակ՝ ՀՀ-ում տվյալ բնագավառը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի (ԳՕՍՏ-եր, նախագծային, շահագործման, կարգաբերման, կարգավարական և այլն) բացակայության պատճառով:

5. Քաղաքացիներից, էներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող անձանցից և սպառողներից ստացված բողոքների զգալի մասն առնչվում է էներգետիկայի բնագավառի էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օբյեկտների (կառույցների, տեղակայանքների, կապի, հաղորդման (փոխադրման) ու բաշխման գծերի և այլն) անվտանգության գոտիների խախտումների հետ:
Վերլուծությունից պարզվել է, որ արձանագրված խախտումների պատճառը պետական, համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող հողամասերի վրա՝ անվտանգության գոտիներում, ինքնակամ կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված թույտվությունների հիման վրա էներգատեղակայանքների, շենքերի և շինությունների կառուցումն է, ինչը կարող է հանգեցնել մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրի վնասի պատճառման դեպքերի:

6. Էներգետիկայի բնագավառը կարգավորող որոշ ԳՈՍՏ-երի բացակայությունը տնտեսվարող սուբյեկտների կողմից տարաբնույթ մեկնաբանությունների, իսկ առանձին դեպքերում՝ նաև շահարկման տեղիք է տալիս:

7. Հայաստանի էլեկտրական ցանցերի սեփականաշնորհման ժամանակ որոշակի 6, 10, և 0.4 կՎ էլեկտրատեղակայանքներ չեն ներառվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հաշվեկշռում, ինչի հետևանքով ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրանց տեխնիկական վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում են ընկերության կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Իրավական ակտերով սահմանված կարգով չեն իրականացվում դրանց տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումների վերականգնման, արդիականացման կամ փոխարինման աշխատանքները, ինչը մեծ ռիսկեր է պարունակում՝ սպառնալով մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին, ինպես նաև պատճառ են հանդիսացում հոսանքահարման մահացու ելքով պատահարների:

8. Վերջին ժամանակաշրջանում էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն տրամադրելու նպատակով կատարած տեխնիկական զննումների արդյունքում արձանագրվում են դեպքեր, երբ տնտեսվարող սուբյեկտների կողմից տեղադրվում են ոչ գործարանային արտադրության, ինքնաշեն լրակազմ տրանսֆորմատորային ենթակայաններ (ԼՏԵ) և այլ էլեկտրատեղակայանքներ, որոնք ՀՀ օրենսդրությամբ հավաստված չեն, չունեն արտադրող գործարանի կողմից տրված տեխնիկական անձնագրեր, չեն համապատասխանում էլեկտրատեղակայանքների շահագործման և անվտանգության կանոններին և այլ իրավական ակտերի պահանջներին, ինչը կարող է պատճառ հանդիսանալ հոսանքահարման մահացու ելքով պատահարների:

9. ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 634-ն որոշման համաձայն 2023 թվականի ապրիլի 23-ից էներգետիկայի և էներգասպառման ոլորտի տեխնիկական կանոնակարգերը փոխարինվեցին նորերով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված իրավական ակտերում ներառված են ժամանակակից տեխնոլոգիական ու ավտոմատ համակարգերով հագեցած էներգատեղակայանքներին և դրանց շահագործման անվտանգության կանոններին

ներկայացվող պահանջներ՝ անհրաժեշտություն է առաջացել վերապատրաստելու Տեսչական մարմնի էներգետիկայի և էներգասպառման ոլորտում վերահսկողություն իրականացնող մասնագետներին:

Մինչև 110 կՎ լարման (0,22-35կՎ) էլեկտրաէներգետիկական և ցածր ճնշման գազի համակարգերում (այդ թվում ներտնային գազասպառման) մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին վնաս պատճառած պատահարների, ինչպես նաև էներգահամակարգերի հուսալիության և անվտանգության չափանիշների պահպանման նպատակով 110 կՎ և բարձր լարման, գազամատակարարման համակարգում՝ գազի միջին և բարձր ճնշման էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների վերլուծության օրենսդրությամբ վերապահված գործառույթը Տեսչական մարմնի կողմից չի իրականացվում համապատասխան մասնագետների և հաստիքների բացակայության պատճառով, որի արդյունքում խախտումները հայտնաբերելու նպատակով ստուգումներ չեն իրականացվում 0,22-35կՎ լարման և ցածր ճնշման գազի համակարգերում, որտեղ տեղի են ունենում պատահարների (այդ թվում մահացու ելքով) 90%-ից ավելին:

Ոլորտային մասնագիտացման որակավորում ունեցող մասնագետների, թափուր հաստատիքների չհամալրման, ինչպես նաև առկա թվաքանակի անբավարարության պայմաններում անհնար է դառնում սահմանված կարգով համալրել Տեսչական մարմնին օրենքով վերապավված գործառույթների շրջանակներում՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով իրականացվող համակարգային և մահացու ելքով պատահարների մասնագիտական քննություններն իրականացնող հանձնաժողովների կազմերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ապահովել տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող պատահարների մասնագիտական քննությունն իրականացնող հանձնաժողովների կազմերում տեսչական մարմնի մասնագետների ներգրավումը: Արդյունքում պատահարների մասնագիտական քննությունները պատշաճ չեն իրականացվում, ինչի հետևանքով լիարժեքորեն չեն բացահայտվում տեղի ունեցած պատահարների պատճառները:

Գործարկման եզրակացությունների մեծ ծավալի և մասնագիտական ռեսուրսի անբավարար լինելու պատճառով էներգատեղակայանքների գործարկման եզրակացությունները ոչ միշտ են տրամադրվում ՀՀ կառավարության որոշումներով սահմանված ժամկետներում, ինչը երբեմն առաջացնում է տնտեսվարող սուբյեկտների արդարացի բողոքը:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Ավտոբուսային ոչ կանոնավոր միջպետական փոխադրումների կազմակերպումն իրականացվում է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 16-րդ հոդվածի համաձայն,

իսկ պետական տուրք գանձվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 53 և 54 կետերին համապատասխան: Տեսչական մարմնի կողմից ոչ կանոնավոր միջպետական ուղևորափոխադրումների նկատմամբ վերահսկողական գործառույթ չի իրականացվում, քանի որ շուրջօրյա հսկողության անհրաժեշտություն է առաջանում, որը Տեսչական մարմնի մասնագետի համար սահմանված աշխատանքային ռեժիմի սահմաններում կատարել հնարավոր չի:

2. Տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից իրականացվող տաքսամոտորային ուղևորափոխադրումների խախտումները պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ:

3. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 16-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1604-Ն որոշմամբ՝ ՀՀ տարածքում գործող ավտոկայարաններում, ավտոկայաններում և ենթակարգավարական կետերում միջպետական, միջմարզային, ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղիների սպասարկման գործընթացի ապահովման, ուղետոմսերի վաճառքի և երթակարգավարական ծառայությունների մատուցման կազմակերպման գործառույթը վերապահված է □Հայավտոկայարան□ ՓԲ ընկերությանը: Համաձայն «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի՝ միջպետական երթուղիների ուղևորների տոմսավորումը պետք է իրականացվի բացառապես ավտոկայարանների և ավտոկայանների, ինչպես նաև դրանց հետ պայմանագիր ունեցող կազմակերպությունների տոմսարկղերից, որոնց նկատմամբ Տեսչական մարմինը չի կարողանում իրականացնել վերահսկողական գործառույթ՝ գործիքակազմի բացակայության պատճառով, օրինակ՝ Տեսչական մարմինը հսկիչ գնման իրավասություն չունի:

4. 2023 թվականի ընթացքում ներհամայնքային կանոնավոր երթուղիների պատշաճ սպասարկումն ապահովելու համար Երևան քաղաքում և ՀՀ մյուս խոշոր բնակավայրերում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում կազմվել է տրանսպորտի բնագավառում վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 295 արձանագրություն, սակայն էական բարելավում չի արձանագրվել՝ թերի գործիքակազմի պատճառով:

5. Երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երթևեկության ոլորտում ռիսկայնությունը կապված է երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումների հետ, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման, բեռնատար վագոնների ու բեռնարկղերի բեռնման ու բեռնաթափման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման հետ: Տվյալ ոլորտում վերահսկողական միջոցառումներ չեն իրականացվում օրենսդրական բացի պատճառով:

6. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության ռիսկերն ուղղակիորեն կապված են տրանսպորտային միջոցների շահագործման և փոխադրումների իրականացման անվտանգության կանոնների խախտումների հետ: ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի 1565-Ն որոշման Հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տեխնիկական զննման կայան պետք է կահավորված լինի թվային տեսախցիկով: Նույն որոշման 15-րդ կետը պահանջում է տեսաձայնագրել տեխնիկական զննության իրականացման գործընթացը, իսկ ձայնագրությունները՝ պահպանել առնվազն մեկ տարի: Սակայն իրականում ոչ բոլոր տնտեսավարողներն են կատարում որոշման պահանջները, իսկ օրենսդրությունը չի նախատեսում վարչական պատասխանատվություն վերը նշված պահանջները չկատարելու համար:

7. Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցմամբ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ, ինչպես նաև պարունակում է լրջագույն ռիսկեր տրանսպորտային միջոցի անվտանգ երթևեկության տեսակետից: Տեսչական մարմինը վերահսկողական միջոցառումներն իրականացնում է 2 անշարժ և 1 շարժական կշեռքների շնորհիվ: 2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 57871 կշռում, որի արդյունքում կազմվել են տրանսպորտի բնագավառում վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ 3687 արձանագրություն, սակայն գերբեռնված տրանսպորտային միջոցները շրջանցում են կշռման վայրերը զարտուղի ճանապարհներով:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. 2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից քաղաքաշինական օբյեկտներում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է այն փաստը, որ համայնքների կողմից քաղաքաշինական փաստաթղթերը տրամադրվում են ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներով, ինչի հետևանքով կառուցապատողը հետագայում՝ ավարտված շինարարական օբյեկտը շահագործման հանձնելիս, հայտնվում է անելանելի վիճակում: Այն է՝ կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի վերաբերյալ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված պահանջների խախտումով քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման հետևանքով Տեսչական մարմնի կողմից արձանագրվում են չլիցենզավորված գործունեության դեպքեր, որի համար կառուցապատողի նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ: Միաժամանակ, ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի կողմից արձանագրվում են նաև մատչելիությունը չապահովելու հետ կապված խնդիրներ, որի համար կառուցապատողը ևս ենթարկվում է վարչական պատասխանատվության: Սակայն վարչական պատասխանատվության կիրառման արդյունքում խնդիրները չեն վերանում, և կառուցապատողի համար համայնքի կողմից թույլ տրված իրավախախտման պատճառով առաջանում են լուրջ խոչընդոտներ՝ ավարտական ակտը ձևակերպելու ժամանակ:

2. Ստուգումների ընթացքում բացահայտվում են նաև կապալառու կազմակերպությունների կողմից թույլ տրված կոնստրուկտիվ բնույթի կոպիտ խախտումներ, որոնք հետագայում կարող են ազդել կառուցված շենք շինությունների սեյսմակայունության վրա: Սակայն վարչական վարույթի ընթացքում շինության սեփականատիրոջ կամ կապալառու կազմակերպության կողմից տրամադրվում է դրական փարձագիտական եզրակացություն այն մասին, որ կապալառու կազմակերպության կողմից թույլ տրված խախտումը չի ազդում կառուցված կառույցի սեյսմակայունության և հուսալիության վրա: Փաստորեն առաջանում է կրկնակի փորձաքննության անհրաժեշտություն:

3. Հանրությունից ստացված բողոքների զգալի մասը վերաբերում է առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի բազմաբնակարան շենքերում և հողամասերում իրականացվող ինքնակամ շինարարական աշխատանքներին, որոնց չափորոշիչները՝ կոնստրուկտիվ համակարգը, միջտարածությունները չեն համապատասխանում իրավական ակտերով սահմանված պահանջներին, սակայն համայնքի

ղեկավարները քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասի սահմաններում կամ բազմաբնակարան շենքերում իրականացվող ինքնակամ շինարարության նկատմամբ կիրառում են միայն վարչական պատասխանատվության միջոցներ՝ առանց ինքնակամ աշխատանքների հետևանքները վերացնելու: Մինչդեռ բազմաբնակարան շենքերում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի կոնստրուկտիվ բնույթի միջամտությունները կարող են հանգեցնել անդառնալի հետևանքների: Վերահսկողական միջոցառումների արդյունքում Տեսչական մարմնի կողմից արձանագրվել է, որ քաղաքացիները, անտեսելով օրենքը և օգտվելով համայնքի ղեկավարների անգործությունից, շարունակում են իրականացնել ինքնակամ շինարարություն և միայն վարչական տուգանք վճարելով պահպանում են անօրինական կառույցները: Ապօրինի կառուցապատումը ոտնահարում է այլ քաղաքացիների շահերը, խոչընդոտում նրանց կառուցապատման իրավունքին: Ավելին, այդ կառույցների մասով պետության կողմից գույքահարկ չի գանձվում, դրանք շարունակում են շահագործվել առանց իրավական հիմքի՝ պետությանը վնաս հասցնելով թե անվտանգության, թե ֆինանսական տեսանկյուններից:

4. Վերահսկողական աշխատանքի արդյունքում պարզվել է, որ համայնքներում դեռ կան օբյեկտներ, որոնք շահագործվում են առանց հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար մատչելիությունն ապահովելու և առանց հրդեհային անվտանգության նորմերը պահպանելու:

5. ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման մեջ հստակ չեն ձևակերպված քաղաքաշինական օբյեկտների ռիսկայնության աստիճանների չափորոշիչները, հատկապես՝ 3-րդ կատեգորիայի օբյեկտների բնութագրիչները, ինչը խոչընդոտում է համաչափ վարչարարության իրականացմանը:

6. Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 173-րդ կետի՝ կառուցվող (այդ թվում՝ վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, արդիականացվող, ընդլայնվող) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի շինարարական աշխատանքների ավարտը՝ կառուցապատողի հայեցողությամբ, փաստագրվում է ավարտական ակտով՝ համաձայն N 5 հավելվածի N 3-2 ձևի հաստատված նախագծով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացվելուց և օրենքով ու սույն կարգով

սահմանված պահանջներին համապատասխան կապալառուի կողմից ավարտված շինարարական օբյեկտը կառուցապատողին հանձնվելուց և կառուցապատողի կողմից այն ընդունվելուց հետո: Կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի շինարարական աշխատանքների ավարտն ընդունող հանձնաժողովը ձևավորում և ղեկավարում է կառուցապատողը՝ համաձայն N 5 հավելվածի N 3-2-2 ձևի:

Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու նպատակով կառուցապատողը դիմում է իրավասու մարմնին՝ համաձայն N 5 հավելվածի N 3-3-3 ձևի, շահագործման թույլտվության ձևակերպման համար: Դիմումին կից ներկայացվում են՝

1) մատակարար կազմակերպությունների մասնագիտական դրական եզրակացությունները.

2) ինժեներատեխնոլոգիական սարքավորումների մոնտաժման և գործարկման աշխատանքների փորձարկումն

իրականացրած կազմակերպությունների դրական եզրակացությունները.

3) կառուցապատողի կամ նրա իրավահաջորդի, գրավոր հայտարարությունը շինարարական օբյեկտը շահագործման պատրաստ լինելու վերաբերյալ.

4) շահագործման թույլտվության ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (կամ սույն կարգի 98-րդ կետով) սահմանված կարգով տեղական վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:

Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ավարտական ակտը հիմք է կառուցված օբյեկտի և դրա կազմում ստորաբաժանված գույքային միավորների (բնակարաններ կամ ոչ բնակելի տարածքներ) նկատմամբ գույքային իրավունքների գրանցման համար՝ առանց շահագործման իրավունքի: Շահագործման թույլտվության ձևակերպման ժամանակ բազմաբնակարան շենքում հրդեհային անվտանգության համար պահանջվող միջոցառումների բացակայությունը բազմաբնակարան շենքի հետագա շահագործման ժամանակ կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների:

7. Քաղաքաշինության բնագավառում Տեսչական մարմնին վերահսկողական գործընթացում վերապահված է միայն ստուգման իրականացում, սակայն որոշ դեպքերում, օրինակ, երբ բացակայում են համաձայնեցված քաղաքաշինական փաստաթղթեր և շինարարության թույլտվություն, ինչպես նաև քաղաքացիներից ստացվող բողոքներին օպերատիվ արձագարքելու համար, անհրաժեշտություն է առաջանում իրականացնել դիտարկում կամ տեղազննություն:

8. Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման հավելված 1-ի 149-րդ կետի՝ տարածքային բաժնի և շահագրգիռ պետական մարմինների՝ մասնակցությունն ընդունող հանձնաժողովի աշխատանքին համարվում է այդ մարմինների կողմից օրենքով իրենց լիազորությունների սահմաններում կատարված, ավարտված շինարարական օբյեկտի վերջնական ստուգում, և պետք է իրականացվի □Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին□ օրենքի դրույթներին համահունչ: 2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 1721 դրական և 1323 բացասական եզրակացություն: Հաշվի առնելով ավարտված շինարարական օբյեկտների հանձնաժողովին մասնակցությունների քանակը և ստուգման գործընթացի ավելորդ փաստաթղթային ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև Տեսչական մարմնի քաղաքաշինական բնագավառի մասնագետների փաստացի քանակը՝ հնարավոր չէ ապահովել «վերջնական ստուգումների» կազմակերպումը □Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին□ օրենքի տրամաբանության մեջ:

9. Սուբվենցիոն և պետական ծրագրերի կատարման նկատմամբ վերահսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել է, որ տեխնիկական հսկողություն իրականացնող քաղաքաշինական սուբյեկտների գործունեությունը կրում է ձևական բնույթ: Ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովին ներկայացվում են ծածկված աշխատանքների միջանկյալ ակտեր, որտեղ արձանագրված են աշխատանքների քաղաքաշինական փաստաթղթերով նախատեսված պահանջներին համապատասխանելու մասին, սակայն կատարված աշխատանքների իրական վիճակը չի համապատասխանում դրան:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ և ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, ինչպես նաև հանրությունից ստացված դիմումների, նախաքննական մարմինների որոշումների հիման վրա և ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային **օրենսդրության պահանջների պահպանման** համապատասխանության նկատմամբ իրականացված ստուգումների վիճակագրությունը վկայում է, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, հրապարակային սակարկությունների գործընթացի, ինքնակամ կառույցների օրինականացման վարութային գործողությունների խախտումները,

պաշտոնական կեղծիքների եղանակով չմասնավորեցվող հողամասերի օտարումը, նույն եղանակով ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման դեպքերը նվազել են, որպես այդպիսին 2023 թվականի դրությամբ բարձր ռիսկային չեն, սակայն շարունակում են մնալ որոշակի ռիսկայնության ուղղություններ: Բնագավառի կարևոր խնդիրներից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը: Առաջնային խնդիր է նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործության դրսևորումը, ինչն էական վնաս է հասցնում համայնքային և պետական շահերին:

10. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Տեսչական մարմնին կատարողականի գնահատման աշխատանքները կատարվել են ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» № 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և հաշվի առնելով Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 08 որոշմամբ հաստատված «ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը»:

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ,
2. գործընթացի չափորոշիչներ,
3. արդյունքի չափորոշիչներ:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1) ***Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը*** գնահատելու համար յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակի գնահատումը կատարվում է հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

Այսպիսով, 2023 թվականին Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը ***0. 22*** է:

Ոլորտ	1.1. Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը		
	S1- հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումար	S- ստուգաթերթերով սահմանված կշիռների գումար	$L = S_1/S$
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	14134	55705	***0.253729468***
Էներգետիկայի	6171	13630	***0.452751284***
Տրանսպորտի	207	1805	***0.11468144***
Քաղաքաշինության	906	27141	***0.033381231***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ամենացածր ցուցանիշը արձանագրվել է քաղաքաշինության ոլորտում, իսկ ամենաբարձր ցուցանիշը էներգետիկայի ոլորտում: *Պատկերն ըստ ոլորտների՝*



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2022թ.	2023թ.
	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.3	0.25
	Էներգետիկայի	0.5	0.45

	Տրանսպորտի անվտանգության	0.06	0.11
	Քաղաքաշինության	0.06	0.03

**Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտում իրականացվող ստուգումները և վերահսկողությունը չեն կարգավորվում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով. Վերոգրյալ գործառույթների իրականացումը կարգավորվում է «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին», «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» օրենքներով. ուստի ոլորտի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայության և գնահատման հաշվարկ չի կատարվել:*

1.2) ***Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը*** գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատվում է հաշվետու ժամանակահատվածում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

2023 թվականին Տեսչական մարմնի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը ***0. 24***է:

Ոլորտ	**1.2. Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը**		
	SR – հաշվետու ժամանակահատվածում ոլորտի բարձր ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումար	**S– վերահսկողության արդյունքում ստուգաթերթերով սահմանված կշիռների գումար**	**C = SR/S**
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	14134	55705	***0.253729468***
Էներգետիկայի	6171	13630	***0.452751284***

Տրանսպորտի	94	1046	***0.089866157***
Քաղաքաշինության	458	16841	***0.027195535***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում առավել բարձր ռիսկային տնտեսավարողների մոտ իրականացված ստուգումների արդյունքում խախտումների ամենացածր ցուցանիշը արձանագրվել է քաղաքաշինության ոլորտում, իսկ ամենաբարձր ցուցանիշը կրկին էներգետիկայի ոլորտում: *Պատկերն ըստ ոլորտների՝*



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2022թ.	2023թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.3	0.25
2	Էներգետիկայի	0.5	0.45
3	Տրանսպորտի	0.1	0.09
4	Քաղաքաշինության	0.04	0.03

1.3) ***Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.***

2023 թվականին ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար աշխատանքներն իրականացրել են Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության հաստիքացուցակով նախատեսված 7 աշխատակիցներից 6-ը՝ մեկ հաստիքը թափուր է դարձել 12.12.2022թ.-ին և դեռևս չի համալրվել: Ռիսկերի պլանավորման, վերլուծության և

գնահատման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ չեն հատկացվել:

1.4) ***Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.***

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումներն իրականացվել են համապատասխան ոլորտային ստորաբաժանումների, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցների միջոցով:

Բաժնի 5 հաստիքներից համալրված է 3-ը, բաժնի աշխատանքների իրականացմանը ներգրավված է նաև 1 փորձագետ:

Հաշվետու ժամանակաշրջանում՝

- Տրվել է մամուլի 62 հաղորդագրություն և իրազեկող 6 նյութ:
- Կազմակերպվել է Տեսչական ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների և մասնագետների կողմից 149 հարցազրույց և պարզաբանումների տրամադրում:
- Իրականացվել է թեժ գծով ստացված 246 զանգերի խորհրդատվություն և պարզաբանում:
- Խորհրդատվություն է տրամադրվել 122 տնտեսավարողի ու քաղաքացու:
- Սոցիալական գովազդային պաստառներ չեն պատրաստվել ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար Տեսչական մարմնի կողմից ֆինանսական լրացուցիչ միջոցներ չեն հատկացվել:

1.5) ***Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը.***

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Տեսչական մարմնի կողմից մշակվել է թվով 5 օրենսդրական առաջարկ՝ 5-ն էլ տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտում. 3-ը՝ տարեկան ծրագրի շրջանակներում, 2-ը՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը

գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով

չնախատեսված, սակայն Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների միջին տևողությունը:

2023 թվականին Տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացրած ստուգումների միջին տևողությունը ***2.85*** օր է:

Ոլորտ	2.1. Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը		
	T – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողություն	N – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակ	R = T/N
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	30	11	***2.727272727***
Էներգետիկայի	0	0	***0***
Տրանսպորտի	0	0	***0***
Քաղաքաշինության	42	16	***2.625***
Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	39	12	***3.25***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողության գրեթե նույնական տվյալներ են արձանագրվել տեխնիկական և հրդեհային անվտանգության և քաղաքաշինության ոլորտներում, և ամենաբարձր ցուցանիշը՝ պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտնում: Էներգետիկայի և տրանսպորտի ոլորտներում ըստ անհրաժեշտության չեն իրականացվել: *Համեմատական պատկերն ըստ ոլորտների՝*



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2022թ.	2023թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	3.6	2.7
2	Էներգետիկայի	0	0
3	Տրանսպորտի	2.5	0
4	Քաղաքաշինության	2.5	2.6
5	Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	2.9	3.2

2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ

չափորոշչի գնահատման համար վերլուծվել է բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի և Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում նույն ժամանակահատվածում ընդգրկված և իրականացված ստուգումների քանակի հարաբերությունը:

2023 թվականին բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ ***0.9 է***:

Ոլորտ	2.2. Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ		
	N2- բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակ	N1- ստուգումների տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակ	R= N2/N1
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	262	262	*1*
Էներգետիկայի	136	136	*1*
Տրանսպորտի	15	25	*0.6*
Քաղաքաշինության	72	111	*0.648648649*

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ստուգումների գերակշիռ մասը նախատեսվել և իրանացվել են առավել բարձր ռիսկայնություն ունեցող տնտեսավարողների մոտ: *Պատկերն ըստ ոլորտների՝*



		ՑՈՒՑԱՆԻՇ

	ՈԼՈՐՏ	2022թ.	2023թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	1	1
2	Էներգետիկայի	1	1
3	Տրանսպորտի	0.8	0.6
4	Քաղաքաշինության	1	0.6

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը հաշվարկվել է ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ընդհանուր տևողության և դրանց քանակի հարաբերությամբ:

2023 թվականին ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմել է ***3.17*** օր:

Ոլորտ	2.3. Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը		
	T - ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և իրականացված ստուգումների ընդհանուր տևողություն	N – ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների քանակ	A = T/N
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	730	262	***2.786259542***
Էներգետիկայի	444	136	***3.264705882***
Տրանսպորտի	55	25	***2.2***
Քաղաքաշինության	419	111	***3.774774775***
Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	67	7	***9.571428571***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողություն ամենամեծ ցուցանիշը արձանագրվել է պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտում, իսկ ամենացածր ցուցանիշները տրանսպորտի ոլորտում:

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2022թ.	2023թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	4.0	2.79
2	Էներգետիկայի	3.1	3.26
3	Տրանսպորտի	2.8	2.2
4	Քաղաքաշինության	4.8	3.77
5	Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	9.3	9.57

2.4)

Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունն ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.

2023 թվականին Տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա

միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) ***0.79*** է:

Ոլորտ	2.4. Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին		
	N2- ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակ (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ)	N1 - ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակ	R = N2/N1
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	10	11	***0.909090909***
Էներգետիկայի	0	0	***0***
Տրանսպորտի	0	0	***0***
Քաղաքաշինության	11	16	***0.6875***
Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	10	12	***0.833333333***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների գերակշիռ մասում ստուգման ընթացքում հայտնաբերվել են խախտումներ, հարուցվել են վարչական վարույթներ, ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է տեխնիկական և հրդեհային անվտանգության և պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում, էներգետիկայի և տրանսպորտի ոլորտներում ըստ անհրաժեշտության ստուգումներ չեն իրականացվել: *Պատկերն ըստ ոլորտների՝*



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2022թ.	2023թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.6	0.9
2	Էներգետիկայի	0	0
3	Տրանսպորտի	0.3	0
4	Քաղաքաշինության	1.3	0.69
5	Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	1.2	0.83

2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Չափորոշչի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով նշված հարցերի վերաբերյալ ստացված դիմում-բողոքները: 2023 թվականի ընթացքում նշված հարցերի վերաբերյալ տեսչական մարմնի դեմ դիմում-բողոքներ չեն ներկայացվել:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

3.1) ***Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը.***

2023 թվականին ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը ***0.04*** է:

Ոլորտ	3.1. Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը		
	N2 – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակ	N1– ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակ	R = N2/N1
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	11	262	***0.041984733***
Էներգետիկայի	0	136	***0***
Տրանսպորտի	0	25	***0***
Քաղաքաշինության	16	111	***0.144144144***
Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	12	7	***1.714285714***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը բավականին նվազել է, ամենամեծ ցուցանիշը արձանագրվել է պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտում, իսկ տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում աշխատանքներն իրականացվել են ստուգումների տարեկան ծրագրի շրջանակներում:

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2022թ.	2023թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.1	0.04
2	Էներգետիկայի	0	0
3	Տրանսպորտի	1.2	0
4	Քաղաքաշինության	0.2	0.14
5	Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	1.8	1.71

3.2) Տեսչական մարմնի վերահսկման բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը.

Չափորոշչի գնահատման համար հիմք է հանդիսանում վերահսկողության արդյունքում բարձր ռիսկային բնագավառների տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնության փոփոխությունը: Չափորոշչի գնահատումը կատարվում է տարեկան մեկ անգամ:

Տրամադրված տեղեկատվության համաձայն բարձր ռիսկային բնագավառների տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնության փոփոխությունը ներկայացված է աղյուսակով՝

Ոլորտ	*Տարեկան ստուգումն*	*Մինչև տուգումը բարձր ռիսկ ունեցող*	*Ռիսկայնության փոփոխությունը ստուգումից հետո*

	երի քանակ (հատ)	*տնտեսավարողն երի քանակ (հատ)*	*Բար ձր (3)*	*Միջ ին (2)*	*Ցա ծր (1)*
Տրանսպորտի	28	18	***1***	***17***	***0***
Էներգետիկայի	91	91	***21***	***63***	***7***
Քաղաքաշինության	219	164	***15***	***136***	***13***
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	209	209	***66***	***119***	***24***

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Հաշվարկվում են հաշվետու ժամանակահատվածում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշները:

2023 թվականին իրականացված առանձին ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ հատկացված ստուգումներին միջինում 1 ստուգման համար հատկացվել է 76.584 ՀՀ դրամ, և միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1.6 աշխատակից:

	ՈԼՈՐՏ	**ՑՈՒՑԱՆԻՇ (միջին 1 ստուգում)**			
		2022թ.		**2023թ.**	
		Ծախս/հազ. ՀՀ դրամ	**Ռեսուրս/աշխատակից**	**Ծախս/հազ. ՀՀ դրամ**	**Ռեսուրս/աշխատակից**
	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	***21.0***	***1.3***	***40.13***	***1.75***
	Էներգետիկայի	***21.0***	***1.1***	***32.02***	***0.7***
	Տրանսպորտի	***48.7***	***1.4***	***28.26***	***1.3***
	Քաղաքաշինության	***46.7***	***1.8***	***55.47***	***1.4***
	Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական	***202.5***	***2.6***	***414.83***	***5.5***

	աշխատանքների և հողօգտագործման				

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշներով ամենաբարձր ցուցանիշ արձանագրվել է պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտում՝ ինչը կարող է պայմանավորված լինել ոլորտում ստուգումների երկար տևողությամբ և գործուղումների անհրաժեշտությամբ, ամենացածր ցուցանիշները՝ արձանագրվել են էներգետիկայի և տրանսպորտի ոլորտներում:

Պատկերն ըստ ոլորտների՝



3.4) Տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Ըստ ոլորտների պատկերն հետևյալն է

Տրանսպորտի ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում վերադասության կարգով բողոքարկվել է 79 վարչական ակտ և 13 գործ փոխանցվել է 2022 թվականից: Ավարտվել է վերադասության կարգով ներկայացված բողոքների քննման 79 գործ, որից 75-ով վարչական ակտերը թողնվել են

անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 1 գործով բողոքը բավարարվել է մասնակի, 2 գործով՝ բավարարվել է: 1 բողոք թողնվել է առանց քննության: 13 բողոք քննության փուլում է:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում վերադասության կարգով բողոքարկվել է 38 վարչական ակտ և 12 գործ փոխանցվել է 2022 թվականից: Ավարտվել է վերադասության կարգով ներկայացված բողոքների քննման 46 գործ, որից 37-ով վարչական ակտերը թողնվել են անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 2 գործով բողոքը բավարարվել է մասնակի, 4 գործով՝ բավարարվել է: 3 բողոք թողնվել է առանց քննության: 4 բողոք քննության փուլում է:

Էներգետիկայի ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում վերադասության կարգով բողոքարկվել է 2 վարչական ակտ և 1 գործ փոխանցվել է 2022 թվականից : Ավարտվել է վերադասության կարգով ներկայացված բողոքների քննման 3 գործ, որից 3-ով էլ վարչական ակտերը թողնվել են անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման:

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

2023 թվականին դատարան է մուտքագրվել 742 հայցադիմում: Վարույթ է ընդունվել 663 հայցադիմում՝ այդ թվում նաև նախորդ եռամսյակներում ներկայացված, 37-ի ընդունումը մերժվել է :

Հաշվետու եռամսյակում 379 դատական գործերով կայացվել է Տեսչական մարմնի 349 վարչական ակտերն անվավեր ճանաչելու, 30-ով՝ անփոփոխ թողնելու մասին վճիռ: Ներկայացվել է 41 վերաքննիչ բողոք՝ 24-ը Տեսչական մարմնի կողմից և 17-ը՝ տնտեսավարողի, նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված՝ 3 և Տեսչական մարմնի կողմից՝ 3

վերաքննիչ բողոք մերժվել է: Տնտեսավարողի կողմից ներկայացված 1 վերաքննիչ բողոք բավարարվել է:

Տրանսպորտի ոլորտ

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 558 հայցադիմումից վարույթ է ընդունվել 504-ը՝ այդ թվում նաև նախորդ եռամսյակներում ներկայացված, 33-ի ընդունումը մերժվել է: Կայացվել է 293 վճիռ, որոնցից 16-ով տնտեսավարողի հայցերը մերժվել են, իսկ 277-ով՝ Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջները բավարարվել են: Ներկայացվել է 20 վերաքննիչ բողոք՝ 9-ը Տեսչական մարմնի կողմից և 11-ը՝ տնտեսավարողի: Տնտեսավարողի կողմից ներկայացված 1 վերաքննիչ բողոք բավարարվել է:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 160 հայցադիմումից վարույթ է ընդունվել 135-ը՝ այդ թվում նաև նախորդ եռամսյակներում ներկայացված, 4-ի ընդունումը մերժվել է: Կայացվել է 65 վճիռ, որոնցից 9-ով տնտեսավարողի հայցերը մերժվել են, իսկ 56-ով՝ Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջները բավարարվել են: Ներկայացվել է 18 վերաքննիչ բողոք՝ 14-ը Տեսչական մարմնի կողմից և 4-ը՝ տնտեսավարողի: Տնտեսավարողի կողմից ներկայացված 3 և Տեսչական մարմնի կողմից ներկայացված 2 վերաքննիչ բողոք մերժվել է:

Քաղաքաշինության ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացվել է 14 հայցադիմում: Վարույթ է ընդունվել 15-ը՝ այդ թվում նաև նախորդ եռամսյակներում ներկայացված: Կայացվել է 13 վճիռ, որոնցից 11-ով էլ տնտեսավարողի հայցը բավարարվել է, 2 ով՝ մերժվել: Ներկայացվել է 3 վերաքննիչ բողոք՝ 1-ը Տեսչական մարմնի կողմից և 2-ը՝ տնտեսավարողի: Տեսչական մարմնի կողմից ներկայացված 1 վերաքննիչ բողոք մերժվել է:

Էներգետիկայի ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 9 հայցադիմումներից 8-ը է վարույթ է ընդունվել: Կայացվել է 7 վճիռ, որոնցից 3-ով տնտեսավարողի հայցերը մերժվել են, իսկ 4-ով՝ Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջները բավարարվել են:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման:

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացվել է 1 հայցադիմում, որն ընդունվել է վարույթ: Կայացվել է 1 վճիռ, որով Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջը բավարարվել է: